24 ՅՈՒԼԻՍ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 126(5209)

Ազգ Azg

ISSN: 1829-1651

# Ո՛չ 150 դրամին

## *Մայրաքաղաքում անհանգիստ է*

Մայրաքաղաքում արդեն չորրորդ օրն է՝ կրքերը չեն հանդարտվում: Հասարակական տրանսպորտի 50 տոկոսով թանկացումն իր հետ բերեց դժգոհությունների մի մեծ ալիք, ինչն ուղեկցվում է բողոքի ակցիաներով ու թռուցիկների բաժանմամբ: «Free car» ակցիային երեկ միացել են մի քանի տասնյակ քաղաքացիներ, դերասաններ, լրագրողներ: Նրանք մեքենաներին փակցրել են «Ո՛չ 150 դրամ»-ին պաստառն ու մարդկանց կենտրոնից անվճար տանում են ծայրամասեր: Բազմաթիվ քաղաքացիներ փողոցներում շրջում էին՝ վանկարկելով «100 դրամ» եւ կոչ անելով քաղաքացիներին՝ միանալ եւ համընդհանուր պահանջել տրանսպորտի սակագնի իջեցում:



Երեկ առավոտյան բողոքի ակցիա է տեղի ունեցել քաղաքապետարանի դիմաց: Ավելի քան 200 քաղաքացիներ քաղաքապետարանի մոտ պահանջել են սակագնի իջեցում: Նրանք շեշտել են, որ գծի տերերի պատճառով վարորդները վերածվել են փիլերների ու հաճախ խախտում են օրենքը, միայն թե կարողանան գծի տիրոջ պարտադրած գումարը վճարել: *Տես էջ 2*

# Հրաչյա Հարությունյանին կպաշտպանի Ռուսաստանի լավագույն փաստաբաններից մեկը

Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը երեկ է վերադարձել Ռուսաստանից, որտեղ, մի շարք հանդիպումներին զուգահեռ, հանդիպել է նաեւ Պոդոլսկում ավտովթարի պատճառ դարձած հայ վարորդ Հրաչյա Հարությունյանին: Օմբուդսմենի գնահատմամբ՝ Հրաչյա Հարությունյանը դանդաղ է ապաքինվում, դեպրեսիոն վիճակից արդեն դուրս է եկել: «Նույնիսկ ժպտում էր, դրական թեմաներից էլ էինք զրուցում, ընտանիքի անդամներից», ասում է Անդրեասյանը՝ հավելելով, որ հայ վարորդը կամաց-կամաց ապաքինվում է:

**Կարեն Անդրեասյանի** պարզաբանմամբ՝ Հրաչյա Հարությունյանը կարտահանձնվի եւ պատիժը կկրի հայրենիքում միայն դատավճռից հետո: «Դա է պարտադրում միջազգային պայմանագիրը», ասաց Անդրեասյանը՝ հավելելով , որ Հարությունյանը երեք փաստաբան ունի, եւ փաստաբանական թիմը կգլխավորի Ռուսաստանում ամենահայտնի փաստաբաններից մեկը՝ Ռուբեն Մարգարյանը: «Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը խոստացել է ապահովել ֆինանսական կողմն, ու նա կառաջնորդի Հարությունյանի փաստաբանական թիմը, եւ մենք համոզված ենք, որ կապահովվի նրա պաշտպանությունը»:

Ըստ Անդրեասյանի՝ վտանգավոր է խնդիրը ներկայացնել որպես ազգամիջյան կոնֆլիկտ, սակայն դա չի արգելում, որ հարցը բարձրացվի, երբ խախտվում են մարդու իրավունքներն ու արժանապատվությունը:

Անդրադառնալով միջքաղաքային տրանսպորտի գնի թանկացմանը՝ Կարեն Անդրեասյանն ասաց, որ արդեն համապատասխան գրություն են ուղարկել քաղաքապետարան եւ սպասում են պարզաբանումների: «Այս պահին կարող եմ մեկնաբանել միայն մեկ հանգամանք: Ինձ համար տարօրինակ է, որ ընդամենը 3-4 ամիս առաջ քաղաքապետը խոստանում էր, որ թանկացում չի լինելու: Ինձ համար հետաքրքրական է, եւ ես՝ որպես օմբուդսմեն, որպես պաշտոնյա, որպես մարդ, ակնկալում եմ լսել նաեւ այդ հիմնավորումները, որ ինձ քաղաքապետարանն ուղարկելու է. ի՞նչն է փոխվել այս չորս ամիսների ընթացքում, որ այդպես կտրուկ քաղաքապետի ակնկալիքները փոխվել են եւ փոխվել են տնտեսական հիմնավորումն ու բազան», ասաց օմբուդսմենը՝ խոստովանելով, որ հիանում է այն քաղաքացիներով, ովքեր իրենց մեքենաներով անվճար մարդկանց են տեղափոխում: «Ես չունեմ իմ սեփական մեքենան, թե չէ ինքս հաճույքով որեւէ տեղից մեկնելով՝ ինձ հետ մարդկանց կտանեի», ասաց Անդրեասյանը՝ հավելելով, որ նախընտրում է ոտքով քայլել, քան 150 դրամ վճարել:

Հ. Հ.

# Արտգործնախարարների հանդիպում Բրյուսելում

**Հուլիսի 22-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Բրյուսելում մասնակցեց Եվրոպական միության եւ Արեւելյան գործընկերության արտգործնախարարների հանդիպմանը, որին ներկա էին ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը, ԵՄ Ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն:**

**Հանդիպման մասնակիցները քննարկեցին նոյեմբերին Վիլնյուսում կայանալիք Արեւելյան գործընկերության երրորդ գագաթնաժողովի նախապատրաստական աշխատանքները, մտքեր փոխանակվեցին Արեւելյան գործընկերության շրջանակներում ընթացող բանակցային գործընթացներում արձանագրած առաջընթացի շուրջը:**

**Ելույթ ունենալով նիստում՝ Հայաստանի արտգործնախարարն ասաց, որ Արեւելյան գործընկերության Վարշավայի գագաթնաժողովից անցած երկու տարիների ընթացքում զգալի առաջընթաց է գրանցվել համագործակցության բոլոր հիմնական ոլորտներում՝ Ասոցացման համաձայնագրի, մարդկանց շարժունակության, Մուտքի արտոնագրերի դյուրացման եւ Ռեադմիսիայի համաձայնագրերի բանակցությունների:**

**Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը կարեւորեց Արեւելյան գործընկերության շրջանակներում իրականացվող համագործակցությունը՝ իրականացվող բարեփոխումների խթանման համար: Նա շեշտեց, որ միջազգային կառույցների վերջին զեկույցները արձանագրում են Հայաստանի առաջընթացն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ժողովրդավարությունը, խոսքի ազատությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, օրենքի գերակայությունը, արդյունավետ կառավարումը եւ այլն:**

**Էդվարդ Նալբանդյանը նշեց, որ Երեւանում սեպտեմբերի 12-13-ը կայանալիք Արեւելյան գործընկերության ԱԳ նախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը զուգահեռ տեղի կունենա կրթության բնագավառին նվիրված բարձր մակարդակի հանդիպում:**

# Գեներալ Դեմպսին մշակել է Սիրիայի պատերազմին միջամտելու 5 տարբերակ

ԱՄՆ զինված ուժերի շտաբների պետերի միացյալ կոմիտեի ղեկավար, գեներալ Մարտին Դեմպսին կարծում է, որ Սիրիայի հակամարտությանը Վաշինգտոնի ուղղակի միջամտությունը անչափ թանկ կարժենա՝ ամսական 1 մլրդ դոլար: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:



Դեմպսիի կարծիքով, ամերիկացիներն ունեն Սիրիայի պատերազմին միջամտելու 5 տարբերակ: Գեներալը ամենից քիչ ծախսատար է համարում սիրիացի ապստամբների ուսուցումը եւ զինամատակարարումը՝ առանց կռիվներին ամերիկացիների անմիջական մասնակցության: Այս տարբերակը ԱՄՆ-ի բյուջեից կպահանջի տարեկան 500 մլն դոլար: Հարկ կլինի տարածաշրջան ուղարկել հարյուրավոր կամ հազարավոր զինծառայողների եւ ստանալ դաշնակիցների աջակցությունը: Տվյալ սցենարի վտանգն այն է, որ արմատական իսլամիստները կծանոթանան ամերիկացիների գիտելիքներին ու տեխնոլոգիաներին, իսկ դա թույլ կտա մեղադրել ԱՄՆ-ին պատերազմական հանցագործությունների մեջ:

Մյուս չորս տարբերակները ենթադրում են հակամարտությանը ամերիկյան զինված ուժերի անմիջական մասնակցություն: Մասնավորապես, ԱՄՆ-ը կարող է օդային եւ հրթիռային դիպուկ հարվածներ հասցնել Սիրիայի ենթակառույցի օբյեկտներին եւ կառավարական բանակի դիրքերին, երկրի վրա ստեղծել թռիչքազերծ գոտի, կազմակերպել այսպես կոչված բուֆերային գոտիներ (որտեղ ապստամբները կկարողանան պատրաստություն անցնել ամերիկյան զորքերի պաշտպանության ներքո), ինչպես նաեւ իրականացնել Սիրիայի քիմիական զենքի ոչնչացման գործողություն: *Տես էջ 5*

# Ռուստամ Իբրահիմբեկովը կձերբակալվի

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**Շուրջ մեկ շաբաթ առաջ Իլհամ Ալիեւի աշխատակազմի հասարակական-քաղաքական բաժնի վարիչ Ալի Հասանովը, անդրադառնալով ԱՄՆ Կոնգրեսում Ադրբեջանի հասցեին հնչեցված քննադատությանը, հակադարձել էր, թե «Ռուստամ Իբրահիմբեկովի թեկնածության առաջադրումը նախագահական ընտրություններում վկայում է երկրում (Ադրբեջանում- Վ. Ա.) ժողովրդավարության ամենաբարձր մակարդակ»:**

**Երեկ, մինչդեռ, Իլհամ Ալիեւի աշխատակազմին մոտ կանգնած olaylar լրատվական գործակալությունը, վկայակոչելով «համապատասխան մարմիններում միանգամայն վստահելի աղբյուրների», տեղեկագրել է, որ «Ադրբեջան վերադառնալու դեպքում Ռուստամ Իբրահիմբեկովը կձերբակալվի» (տես http://haqqin.az/news/7725):**

**Հայտնի կինոռեժիսորի դեմ հարկային մարմինների հետապնդումներն սկսվել են անցյալ տարեվերջին, երբ նա սկսել է քննադատել իշխող վարչախմբին: Իբրահիմբեկովը երկար տարիներ գլխավորում է Ադրբեջանի կինեմատոգրաֆիստների միությունը: Եվ ահա հարկային մարմինները «պարզել են, որ կինեմատոգրաֆիստների միությանը մշակույթի նախարարության կողմից հատկացված 330 000 մանաթ գումարից 267 130-ը կանխիկ հանձնվել է հաշվետու անձանց»:** *Տես էջ 8*

# Շտեֆան Ֆյուլե. ԵՄ-ի կողմից Հայաստանի նկատմամբ ճնշումներ չկան

Եվրոմիության կողմից ճնշումներ չկան, Հայաստանը ազատ է ինքնակամ որոշում կայացնելու մեջ: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այդ մասին «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում վստահեցրել է Եվրոմիության հարեւանության եւ ընդարձակման հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն՝ պատասխանելով այն հարցին, թե Հայաստանն ինչո՞ւ պետք է նախապատվություն տա ԵՄ Ասոցացման համաձայնագրին եւ ոչ թե Ռուսաստանի նախաձեռնած Մաքսային միությանն անդամակցությանը:



«Ես վերջերս Հայաստանում էի եւ չհանդիպեցի մեկին, ով կասեր, թե մենք ճնշում ենք մեր գործընկերներին՝ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ ընտրություն կատարելիս: Արեւելյան գործընկերության նախարարական հանդիպման ժամանակ ես նշեցի, որ Արեւելյան գործընկերության ծրագիրն իր Ասոցացման համաձայնագրով նպատակ ունի ամրապնդել մեր գործընկերների հնարավորությունները եւ դիրքերը տարածաշրջանում, ինչպես նաեւ խրախուսել հարեւան երկրների հետ իրենց ավանդական հարաբերությունները», - ասել է Ֆյուլեն:

Իր հերթին, Լիտվայի արտաքին գործերի նախարար Լինաս Լինկյավիչուսը, նշելով, որ Մոլդովան արդեն ավարտել է ազատ առեւտրի գոտու բանակցությունները ԵՄ-ի հետ՝ ընդգծել է, որ Հայաստանը նույնպես շանսեր ունի ավարտելու բանակցային այս փուլն արդեն հուլիսին: «Հայաստանը դանդաղորեն, բայց բավականին ինտենսիվ կերպով շարունակում է աշխատել: Ես հավատում եմ, որ նրանք կարող են Խորը եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման շուրջ բանակցություններն ավարտել արդեն այս ամիս: Ճիշտ է՝ շատ ժամանակ չի մնացել, սակայն դա դեռ հնարավոր է: Եթե Հայաստանը հաջողի դա, կարող է դիտարկվել նույն հարթության վրա, ինչ Վրաստանն ու Մոլդովան են այս պահին: Շատ կարեւոր է, որ Հայաստանը նախաստորագրի որքան հնարավոր է շուտ»,- ասել է Լիտվայի ԱԳ նախարարը:

# Մոսկվան միգրանտներից վախենում է

## *Միգրանտներն էլ՝ Մոսկվայից*

Մոսկվայում բնակվող մեր թերթի թղթակից, գործընկեր Ռուբեն Հայրապետյանը «Ազգ»-ի հուլիսի 19-ի համարում գրել էր. «Ռուսաստանցիները, հատկապես մոսկվացիները, սարսափելի հոգնած են իրենց հայրենիքները, այդ թվում՝ Հայաստանը, լցած միգրանտներից»: Ռուբեն Հայրապետյանն իհարկե իրավացի է. նախ, քանի որ բաժանում է ռուսաստանցիներին մոսկվացիներից, ապա նաեւ այն հարցում, որ նրանք երկուսն էլ սարսափելի հոգնել են Մոսկվայում կամ Ռուսաստանում բնակություն հաստատած միգրանտներից: Հանրային կարծիքի ուսումնասիրման համառուսաստանյան կենտրոնի օրերս անցկացրած սոցիոլոգիական հարցումները ցույց են տվել, որ «ռուսաստանցիների համար իրենց երկրի ամենամեծ ու ամենաիրական սպառնալիքը միգրանտներն են». «Ո՞րն է Ռուսաստանի ամենաիրական սպառնալիքը» հարցին հարցվածների 35 տոկոսը (ինչը մեծամասնություն է), պատասխանել է՝ միգրանտները:

Մի պահ ընդունենք, որ ռուսաստանցիներն իրոք ավելի իրական վտանգ իրենց երկրի համար տեսնում են Մոսկվայում շինարարություն անողների, տաքսի վարորդների, շուկայում բանջարեղեն վաճառողների, փողոցներն ավլողների եւ աննպատակ թափառողների մեջ, մի ընդհանուր խոսքով՝ միգրանտների: Ընդ որում, ավելի շատ ռուսաստանցիներ վտանգ են տեսնում միգրանտների մեջ, քան, ասենք, ռուսաստանյան գիտական, կրթական ընդհանուր մակարդակի անկման կամ, օրինակ, հասարակական սոցիալական լրջագույն խնդրի վերածված ալկոհոլիզմի, ավելի ճիշտ՝ «ռուսական ալկոհոլիզմի» մեջ: Իրականում մեր խնդիրը չէ ռուսաստանցիների փոխարեն որոշել կամ նրանց հուշել որոշելու իրենց երկրի գլխավոր մարտահրավերներն ու սպառնացող իրական վտանգները: Մեր խնդիրը մեր հայրենակիցներին կոնկրետ «Ռուսաստանի ամենաիրական սպառնալիքի» տեսքով չտեսնելն է եւ հասկանալը, որ Մոսկվայում, եթե դու շեղաչ ես կամ կովկասյան արտաքինով, ամենեւին նշանակություն չունի, թե կոնկրետ ի՞նչ ազգություն ունես, ասենք, «ռազմավարական գործընկեր, դարավոր բարեկամ» հա՞յ ես, թե՞ «ռազմավարական գործընկեր, դարավոր բարեկամ հայի թշնամի» ադրբեջանցի: Եթե դու ինտեգրված չես ռուսաստանյան-մոսկովյան բիզնես համակարգում, այսինքն՝ անկախ ազգությունից, ռուսաստանցի չես, ուրեմն, անկախ ազգությունից, կովկասցի ես, գաստարբայտեր, միգրանտ, պաայանո, «Ռուսաստանի ամենաիրական սպառնալիք»:

Այսօր չորեքշաբթի է, մայրաքաղաքի Հյուսիսային ավտոկայանից հերթական բարձրակարգ, երկհարկանի, հարմարավետ ավտոբուսը կմեկնի ՌԴ: Ուղեւորափոխադրումներ իրականացնող այս ընկերության ներկայացուցիչը մեր մասնավոր զրույցում նշեց. «Հաճախորդների պակաս չունենք»: Մեր խնդիրն այս ավտոբուսները կանգնեցնելը չէ, մենք ուղղակի պետք է սպառնալիք չգանք մեր երկրում եւ սպառնալիք չդառնանք ուրիշի երկրի համար:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Դասընթաց «Մշակութային լրագրության առանձնահատկությունները» թեմայով

**Հուլիսի 29-ից մինչեւ օգոստոսի 2-ն Աղվերանում Միջմշակութային ուսումնասիրությունների, ուսուցման եւ երկխոսության միջազգային կենտրոն ՀԿ-ն կազմակերպում է դասընթաց՝ «Մշակութային լրագրության առանձնահատկությունները» թեմայով: Ի դեպ, դասընթացն իրականացվում է CAUCULT Կովկասյան մշակութային նախաձեռնությունների ցանց եռամյա ծրագրի շրջանակներում: Այն նախատեսված է լրագրողների եւ լրատվության ոլորտում աշխատող մասնագետների համար, ովքեր մասնավորապես հետաքրքրված են մշակութային եւ արվեստի թեմաներ լուսաբանելով:**

**Ծրագրով նախատեսվում է ներկայացնել մշակույթ եւ միջմշակութային ուսուցում հասկացությունները, մշակութային լրագրության առանձնահատկությունները, ուսումնասիրել սոցիալական մեդիայի դերը մշակութային միջոցառումների լուսաբանման հարցում: Մասնակիցներին նաեւ կներկայացվեն CAUCULT-ի շրջանակներում նախատեսվող համայնքային արվեստի միջոցառումները, որոնք նախատեսված են սկսել հոկտեմբերից. կքննարկվի նաեւ դրանց լուսաբանումը:**

**Դասընթացն իրականացվելու է ոչ ֆորմալ կրթության մեթոդներով, որոնք ներառում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական բլոկներ եւ ուղեկցվում են ինտերակտիվ գործողություններով:**

**CAUCULT-ը միջազգային, միջմշակութային ծրագիր է, որը խթանում է Հարավային Կովկասում էթնիկ, կրոնական եւ մշակութային բազմազանությանը նպաստող նախաձեռնությունները: CAUCULT Կովկասյան մշակութային նախաձեռնությունների ցանց ծրագրի նպատակն է բացահայտելԿովկասում մշակութային բազմազանությունը որպես առաջընթացի եւ բարգավաճ զարգացման կարեւոր նախապայման, ինչպես նաեւ ակտիվացնել եւ հզորացնել Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի համայնքները մշակութային միջոցառումների շնորհիվ:**

Ս. Հ.

# Ո՛չ 150 դրամին



*1-ին էջից*

**Հետաքրքրական է, բազմաթիվ վարորդներ դեմ չեն արտահայտվում, երբ քաղաքացիները 150 դրամի փոխարեն 100 են վճարում: Երեկ 82 եւ 46 երթուղային տաքսիների վարորդները հայտարարել են, որ իրենք վերադառնում են նախկին սակագնին եւ քաղաքացիներից պահանջելու են 100 դրամ: Ըստ շրջանառվող լուրերի՝ գործադուլ են հայտարարում նաեւ երրորդ համարի ավտոբուսների մի քանի վարորդներ:**

**Այս ամենին լուռ հետեւող եւ սոցիալական դժգոհությունը շոու անվանող քաղաքապետարանում երեկ լուռ էին:**

**Կայքերից մեկին տված հարցազրույցում Երեւանի ավագանու անդամ Աստղիկ Գեւորգյանը նշել էր, որ իրենք էլ են մտահոգված, եւ քաղաքապետարանում տրանսպորտի ուղեվարձի վերանայման հարցով քննարկում է սկսվել, որին մասնակցել են ավագանու խմբակցությունների հանձնաժողովների նախագահները, վարչության անդամները: Սակայն քաղաքապետարանից մեզ տեղեկացրին, որ տեղի է ունեցել սովորական նիստ, թե ինչ հարցեր են քննարկվել նիստի ժամանակ, քաղաքապետարանի աշխատակիցը տեղեկացրեց, որ քննարկմանը չի մասնակցել եւ տեղեկատվությանը չի տիրապետում:**

**Ինչեւէ, «Բարգավաճ Հայաստան» եւ «Բարեւ, Երեւան» դաշինքի անդամներն արդեն հայտնել են, որ դեմ են սակագնի թանկացմանը, եւ ամենայն հավանականությամբ հինգշաբթի այդ հարցը կքննարկվի:**

**Հասարակության մեջ մեկ այլ հարց էլ է առաջ գալիս. եթե ավագանին չի հաստատել որոշումը եւ այն չի դրվել ավագանու քննարկմանը, ապա ինչպե՞ս է որոշվել բարձրացնել սակագինը եւ որեւէ տեղ չամրագրված որոշումը կիրառել:**

**Բողոքի ակցիայի մասնակիցները համոզված են, որ եթե շարունակեն նույն ոգով եւ պատրաստակամությամբ, ապա վաղ թե ուշ քաղաքապետարանն ու կառավարությունն ուշադրություն կդարձնեն հասարակական դժգոհությանն, ու տրանսպորտի սակագինը կվերանայվի:**

**Ավելի ուշ քաղաքապետարանում երեկ տեղի ունեցավ Ավագանու իրավական հարցերի խորհրդի նիստը, որտեղ քննարկվեց սակագների հարցը: Երկար, խառն քննարկումներից հետո նիստն ավարտվեց անարդյունք, որեւէ նոր որոշում չառնվեց:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

***ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ-Ի ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ***

# Ռոբոտաշինությունն սկսվում է դպրոցից

Երեկ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի դպրոց-պարտեզում, «Ռոբոտաշինությունն սկսվում է դպրոցից» ծրագրի շրջանակում, մեկնարկել են խմբակավարների վերապատրաստման մեկամսյա դասընթացներ: Մարզերից ժամանած 55 խմբակավար ձեռք կբերի երեխաներին ռոբոտաշինություն դասավանդելու համապատասխան հմտություններ: Դասընթացները կանցկացնեն «Նեյշնլ Ինսթրումենթս», «Ինստիգեյթ» եւ «Սայմոնտեկ» ընկերությունները:

Ծրագիրը համակարգելու, ընդլայնելու եւ ունեցած փորձը բոլոր դպրոցներում կիրառելու նպատակով փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության, «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի, «Քրոնիմես» բարեգործական հիմնադրամի, ԱՄՆ ՄԶԳ «Քաունթերփարթ Ինթերնեշնլ ծրագրի», «Նեյշնլ Ինսթրումենթս», «Ինստիգեյթ» եւ «Սայմոնտեկ» ընկերությունների միջեւ: Հուշագիրը բաց է նույն նպատակը հետապնդող եւ ծրագրին միանալ ցանկացող յուրաքանչյուր կազմակերպության համար:

«Հուշագրի ստորագրմամբ մենք նպատակ ենք հետապնդում աշակերտների մեջ առաջացնել ժամանակակից բարձր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ ռոբոտատեխնիկայի նկատմամբ հետաքրքրություն, վաղ տարիքից զարգացնել ճարտարագիտական մտածելակերպ եւ դեպի բարձրագույն կրթություն ուղղորդել նպատակադրված եւ որակյալ ուսանողների»,-ասաց ԻՏՁՄ գործադիր տնօրեն **Կարեն Վարդանյանը**:

«Գիտությունը նման է շարժիչի, իսկ մարդու միտքը՝ այդ շարժիչն աշխատեցնող լծակի: Մենք ձգտում ենք աշակերտներին տալ գիտությունը մարդկությանը ծառայեցնելու առավելագույն հնարավորություն: Ի վերջո՝ սերունդների խելացի հերթափոխ ապահովելու համար հարկավոր է անընդհատ կատարելագործել եւ շարժիչը, եւ դրա աշխատանքը: Տեխնոլոգիաների զարգացումը տալիս է այդ հնարավորությունը: Այս համագործակցությունը թույլ կտա լուրջ քայլեր կատարել ռոբոտաշինությունը նախասիրությունից լուրջ մասնագիտության վերածելու ճանապարհին»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը, ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության, «Քրոնիմես» բարեգործական հիմնադրամի, «Վորլդ Վիժն Հայաստանի» եւ «Քաունթերփարթ Ինթերնեշնլ Հայաստանի» հետ համագործակցությամբ, նախաձեռնել է ռոբոտաշինության խմբակների ստեղծում՝ Հայաստանի 55 դպրոցում: Դպրոցական խմբակների դասընթացների մեկնարկն աշակերտների համար կտրվի 2013 թվականի սեպտեմբերին: Խմբակներում պարապմունքները կիրականացվեն միության կողմից նախագծված եւ դպրոցներին տրամադրված ուսումնական ռոբոտի կոմպլեկտներով:

Ներկայումս ռոբոտաշինության խմբակներ են գործում մայրաքաղաքի «Այբ» դպրոցում, «Քվանտ» եւ «Պոլիտեխնիկ» վարժարաններում: Խմբակներ կան նաեւ մարզերում: Մասնավորապես՝ Լոռիում (Ախթալա), Սյունիքում (Սիսիան, Կապան), Շիրակում (Գյումրի) եւ Արագածոտնում (Թալին):

«ԱրմՌոբոտիքսի» կազմակերպիչն է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ), գլխավոր հովանավորն է ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը, տեխնիկական հովանավորը՝ «Արթին Վարուժան» ընկերությունը: Դպրոցական խմբակների ծրագրի գործընկերներն են «Քրոնիմես» բարեգործական հիմնադրամը, «Վորլդ Վիժն Հայաստանը» եւ «Քաունթերփարթ Ինթերնեշնլ Հայաստանը»:



«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

**Երբ մի քանի տարի առաջ Տավուշի մարզի Բերդ քաղաքի ու տարածաշրջանի հոգեւոր հովիվ նշանակվեց տեղացի երիտասարդ մի քահանա, բերդցիները... զարմացան. եկեղեցականն այստեղ, առանց չափազանցության, էկզոտիկա էր, այն էլ՝ տեղի ծնունդ: Նախկին Շամշադինի շրջանը Հայաստանի «ամենաաստվածազուրկ» երկրամասերից էր: Բարբարոս բոլշեւիկները այստեղ ոչնչացրել էին գրեթե բոլոր եկեղեցիները, իսկ հատուկենտ կանգուն մնացածներն էլ չէին գործում: Բերդում հողին էին հավասարեցրել տակավին 1680 թվականին կառուցված Սուրբ Գեւորգ եկեղեցին...**



## Գուցե եկեղեցին հենարան դառնա



**Եռանդուն, նպատակասլաց Արամ քահանա Միրզոյանը տարածաշրջանում կրոնական կյանքը վերածնելու իր մաքառումներում անկասելի էր՝ վերակենդանացել են Նոր Վարագավանքը, Տավուշ գյուղի եկեղեցին, Մովսեսում հառնել է վեհատես նորը: Ով գիտե, գուցե եկեղեցին հենարան դառնա Ադրբեջանի հետ ամենամեծ սահմանն ունեցող մարզում նկատվող աղետալի արտագաղթի կանգնեցման գործում:**

**Սակայն հոգեւոր այրի նվիրական երազանքն էր ավելի քան ութսունամյակ հետո եկեղեցի տեսնել հենց Բերդ քաղաքում: Եվ արժանահիշատակ օրը դարձավ 2012 թվականի մայիսի 20-ը, երբ տեղի ունեցավ կառույցի հիմնարկեքի արարողությունը, երբ հանդիսապետ՝ Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանն իր խոսքում Բերդ քաղաքը համեմատեց Հայաստանի հյուսիսարեւելյան սահմանը պատնեշող ամրոցի, իսկ կառուցվելիք եկեղեցին՝ միջնաբերդի հետ:**

**Նոր եկեղեցին քաղաքի տարեցների հորդորով նույնպես կկրի Սուրբ Գեւորգ զորավարի անունը: Թե ինչ փուլում են կառուցապատման աշխատանքները, պատմում են լուսանկարները: Ամեն ինչ հիանալի է ընթանում եւ դա գերազանցապես շինարար Արամայիս Ոսկանյանի շնորհիվ, որն իր «Այգեձոր» ՍՊԸ-ով իրականացնում է եկեղեցու կառուցումը: Ոչ ոք չի կասկածում, որ այդ նվիրյալ անձնավորությունը, ի դեպ, նույնպես տեղի ծնունդ, կկատարի իր խոստումը եւ մեկ տարի հետո հոգեւոր օջախը կբացի իր դռները աստվածակարոտ բերդցիների առջեւ: Առավել եւս, որ հոգով շռայլ այս մարդը շռայլ է նաեւ իր անձնական ֆինանսական ներդրումներով: Գերխնդիրն այն է, որ նորօրյա աղոթատեղին, Աստծո հետ հաղորդակցվելուց բացի, հավատացյալներին առինքնի անթերի գեղեցկությամբ: Այնպես որ հոգածության գլխավոր առարկան շինարարական աշխատանքների բարձրագույն որակն է:**

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

## «Արցախի մելիքների ժառանգներ»

**Ի տեղեկություն հայ հասարակության՝ Երեւանում կազմավորվել եւ Պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից գրանցվել է «Արցախի մելիքների ժառանգներ» հասարակական կազմակերպությունը (գրանցման համարը՝ 211.171.128445):**

**Կազմակերպության հիմնական նպատակն է հնարավորինս նպաստել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) պետականության՝ որպես հայոց միասնական պետության անկապտելի մասի կայացմանն ու բարգավաճմանը:**

**Կազմակերպությունը, վերարժեւորելով Արցախի մելիքների հիմնարար ավանդույթը, սերնդեսերունդ շարունակաբար ծառայել հայ ժողովրդի, մասնավորաբար՝ նրա արեւելից հատվածի ազգային շահերին, կարեւորում է տոհմագիտական եւ ծագումնաբանական ուսումնասիրությունների իրականացումը, Արցախի պատմությանը նվիրված գիտական հետազոտությունների կատարմանը նպաստելը, Արցախի մելիքների բարոյա-արժեքային համակարգի եւ պատվո վարքականոնների վերաիմաստավորումը եւ տարածումը հանրության՝ մասնավորապես՝ երիտասարդության շրջանում:**

**Հանուն վերոնշյալ նպատակների իրականացման կազմակերպությունը պատրաստ է համագործակցել հայրենակցական եւ հայրենասիրական կազմավորումների հետ:**

**Կազմակերպությունը բաց կառույց է, եւ նրան կարող են անդամակցել պատմական Խաչենի, Դիզակի, Վարանդայի, Ջրաբերդի, Գյուլիստանի եւ հարակից տարածքների մելիքական տոհմերի ժառանգներ:**

**Հեռախոս՝ 099.36.68.71:**

ՎԵՐԱԴԱՐՁԻ ՃԱՆԿՈՒԹՅԱՄԲ, ԲԱՅՑ...

## Ծիրանի կարոտով

Հայրենիքից տասներկու տարիների բացակայությանս ընթացքում արդեն վեցերորդ անգամ եմ գալիս Հայաստան: Այս անգամ հենց ծիրանի ճիշտ ժամանակ՝ իմ ամենասիրած մրգի, որի համը գրեթե մոռացել էի այս տարիների ընթացքում:

«Երեւան: Աստաֆյան փողոց: Նստած է խանութպան Համոն...»:

Ուր է մեր օրերի Չարենցը որ գրի. «Երեւան: Երգող շատրվաններ: Հյուսիսային պողոտա...»: Փոխվել, շատ է փոխվել մեր վարդագույն գեղեցկուհին: Աչքս ուրախանում է ամեն մի նորով, զբոսաշրջիկների բազմությամբ, մեր սիրուն երիտասարդությամբ: Էլ Փարիզ գնալ պետք չէ, Երեւանն իրոք դառնում է եվրոպական մակարդակի ինքնատիպ մի քաղաք:

Ու դառնում եմ ծանոթ-բարեկամներիս աչքի փուշը. «Տո էստեղ ի՞նչ կա հավանելու, միայն կենտրոնն է գեղեցիկ, էն էլ ցույց տալու համար է, գնա ծայրամասեր՝ տես մարդիկ ոնց են ապրում: «Ռոսիայի» ետեւում մարդիկ վերմակ, դոշակները բարձած փախչում են այստեղից: Տես ծերերի վիճակը: Տես բակերում խմբված անգործ տղամարդկանց»: Գիտեմ, ասում եմ, շատ ավելի վատ ժամանակներում եմ ապրել:

Երեկոյան հինգից հետո քաղաքում ահավոր խցանումներ են, ինչը վկայում է, որ մարդիկ աշխատանքից տուն են վերադառնում, ուրեմն՝ քիչ թե շատ աշխատանք կա: Ասեմ որ նկատելիորեն ավելացել են քաղաքում արտասահմանյան մակնիշի ավտոմեքենաները եւ վարորդները շատ հանդուրժող են դարձել հետիոտնի նկատմամբ: Այսինքն լավ փոփոխություններ շատ կան քաղաքի կյանքում, ինչը ուրախացնող է:

Ու քանի որ Երեւանում ապրող արական բնակչության զգալի մասը տաքսու վարորդներ են դարձել, ուղեւորության ընթացքում յուրաքանչյուրն իր մտքերն է կիսում ազգից ու իր ապրած կյանքից: Նկատել եմ, որ շատերն են գովում Վրաստանն ու այնտեղի ապրելակերպը: Հի՞շում եք, - ասում եմ, - այն ժամանակները, երբ մեզ մոտ խանութներում թերակշռում էին, մանրը չէին վերադարձնում: Ինչքան նյարդեր էինք փչացնում մեր ճշտությունն ապացուցելու համար: Թվում էր, թե անլուծելի պրոբլեմ էր: Ամեն ինչ հիմա այլ է, որովհետեւ համակարգ մտցվեց, ինչը բացառում է նման երեւույթը: Հուսանք մեզ մոտ էլ մի օր ձեր հավանած Վրաստանի նման կլինի, - ասում եմ երիտասարդ վարորդին:

Եթե թվարկեմ հայ հասարակության մեջ այսօր առկա ակնբախ պրոբլեմները, ապա՝ ըստ իս առաջին տեղում է ծերության անպաշտպանության խնդիրը, հետո՝ օրենքների չգործելը կամ մասնակի գործելը, որոշ օրենքների իսպառ բացակայությունը, կաշառակերությունը, գործազրկությունը, արտագաղթը եւ ծնելիության նվազ ցուցանիշը:

Գրեթե ամեն փողոցում հանդիպում էի ձեռքը մեկնած ծեր մուրացկանի: Սրանք մարդիկ են, որոնք ժամանակին դառը դաստել են ու հիմա մնացել ընդամենը երեսունվեց հազար դրամ կենսաթոշակի հույսին: Այսինքն՝ մոտ 90 դոլարի հասնող կենսաթոշակ: Նյու Յորքի Վել Ֆերի համակարգում, ուր ես եմ աշխատում, սոցիալական օգնության դիմած մեկ անձը, իհարկե որակավորվելու դեպքում, ստանում է ամսական 200 դոլարի միայն սննդի օգնություն: Իսկ եթե դիմողի տարիքը վաթսունից անց է, ապա այդ անձի նկատմամբ գործում է կարիքավորման որոշման 200 տոկոսի սանդղակը: Այսինքն տվյալ թոշակառուն ստանալով հազար դոլարից ավելի կենսաթոշակ՝ կարող է դիմել Վել Ֆերի օգնությանը եւ ստանալ սննդի օգնություն: Էլ չեմ ասում պետության կողմից տրամադրվող խնամակալների եւ ծերերի համար նախատեսված այլ կարգի ծառայությունների մասին: Եվ սա արվում է ոչ միայն իր քաղաքացիների, այլեւ՝ աշխարհի տարբեր երկրներից, այդ թվում՝ նախկին Խորհրդային Միությունից ԱՄՆ ներգաղթած միլիոնավոր տարեցների համար, որոնք այդ երկրում երբեք չեն աշխատել ու հարկ չեն վճարել:

Ահա այսպես է հարգվում ծեր մարդու արժանապատվությունը զարգացած երկրներում: Ոչ մեկս չենք խուսափելու ծերությունից, չինովնիկները՝ նույնպես: Ծերերի պաշտպանվածությունը որեւէ պետության կայացման կարեւոր բաղկացուցիչ է:

Իսկ չգործող օրենքների մասին վերջերս տեղի ունեցած խոսուն ապացույցներից մեկն այն է, որ նախկին քաղաքապետը հեռացվեց պաշտոնից իր դրսեւորած անհարիր վարքագծի համար ու հետո նշանակվեց տրանսպորտի նախարար... Ուրեմն դեռ երկար պիտի փայփայենք հայրենիք մշտապես վերադառնալու հեռանկարը:

Իսկ ի՞նչ անենք, որ մեղմենք ծիրանի կարոտը...

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Նյու Յորք

## Orange Հիմնադրամի աջակցությամբ Լոռու մարզի Կարմիր Աղեկ գյուղում ներդրվում է նոր գյուղատնտեսական նախագիծ

Orange Հիմնադրամի եւ G2IA միացյալ ջանքերով Լոռու մարզի Կարմիր Աղեկ գյուղում մեկնարկում է նոր գյուղատնտեսական նախագիծ: Նախագիծն օգտագործում է սպառողական կոոպերատիվի մոդելը եւ թույլ է տալու գյուղի ավելի քան 38 ընտանիքների միավորել իրենց աշխատանքը՝ ստանալու ավելի լավ արդյունքներ:

Գյուղում ստեղծված կոոպերատիվին աջակցելու նպատակով ստեղծվել են պահածոյացման արտադրամաս եւ խոտաբույսերի չորանոց, որոնք թույլ են տալու կոոպերատիվի անդամներին կազմակերպել աշխատանքը: Բնակիչների համար կազմակերպվել են մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաեւ կապեր են ստեղծվել վերամշակող




ընկերությունների հետ, ներդրված նոր մոդելի՝ սպառողական կոոպերատիվի գործունեությունը եւ բերքի իրացումը հեշտացնելու նպատակով:

Այս օրերին Լոռու մարզի Օձուն գյուղում կազմակերպված գյուղմթերքի ցուցահանդես-տոնավաճառի ժամանակ Կարմիր Աղեկի



բնակիչներն արդեն իսկ ներկայացան իրենց արտադրանքով՝ ցուցադրելով տարբեր մրգերից պատրաստված մուրաբաների, չորացված խոտաբույսերի, հյութերի ու օղու մեծ տեսականին:

«Հայաստանի գյուղերի խնդիրները Orange Հիմնադրամի ուշադրության կենտրոնում են: Կարմիր Աղեկն արդեն երկրորդ գյուղն է, որտեղ Orange Հիմնադրամի աջակցությամբ տնտեսական նախագիծ է իրականացվում: Այն հավակնում է դառնալ կայուն եւ մշտական զարգացման հիմք գյուղի բնակիչների համար: Իսկապես ցանկանում ենք շուտով տեսնել այն արդյունքներն ու փոփոխությունները, որ մեր ներդրումը պիտի բերի այս գյուղին», ասաց Orange Հիմնադրամի գլխավոր քարտուղար Նազարեթ Սեֆերյանը:

Նախագծի իրականացման համար Orange Հիմնադրամը տրամադրել է 4.160.000 դրամ:

ԱԶԳ

## Պահպանում

# Ստորգետնյա շինություններ Երեւանի Հանրապետության հրապարակում

Երեւան քաղաքի Հանրապետության հրապարակի ողջ տարածքում «Լինսի» հիմնադրամի միջոցներով 2003 թվականին իրականացվել են բարեկարգման, շինարարական աշխատանքներ՝ ծանր տեխնիկայի օգտագործման միջոցով: Ասֆալտե շերտը քանդելու ընթացքում տեղում անակնկալ բացվել են բնակելի շինությունների ստորգետնյա բաժանմունքներ, որոնց ուսումնասիրությունը հնությունների պահպանության գործակալության կողմից հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտին: Լիազորված խումբը (պ.գ.թ. Գ. Կարախանյան, պ.գ.թ. Ֆ. Բաբայան, պ.գ.թ. Ա. Ժամկոչյան, ճարտարապետ Ա. Հովսեփյան) տեղում իրականացված աշխատանքներով պարզեց, որ դրանք անցյալ դարերին պատկանող բնակելի շենքերի նկուղային հարկաբաժիններ են (մառաններ)՝ կառուցված որոշակի ամֆիլադային հատակագծով, որմնամույթերի վրա պահվող թաղակապ ծածկերով, կամարակապ բարձր եւ լայն պատուհաններով, սալարկած տուֆաքար հատակներով, ընդլայնական պատերի բացվածքներով եւ շինարարական բազմաթիվ այլ հնարանքներով: Բնակելի եւ տնտեսական նպատակի ծառայող շինությունները ձգվում էին դեպի արեւելք՝ մի կողմից հրապարակի ժամացույցի, մյուս կողմից՝ շատրվանների ուղղությամբ: Նույնատիպ շինություններ բացվել են նաեւ նախկին «Արմենիա» (այժմ՝ «Մարիոթ») հյուրանոցի մուտքի դիմաց, որը ջրով լցված լինելու պատճառով հնարավոր չեղավ պեղել: Հրապարակի մակերեսը խճանկարով հարդարելու նպատակով պեղված տարածքը արագընթաց ծածկվել է հողով եւ ավազով՝ ուսումնասիրությունը թողնելով ապագա սերունդներին: Հրապարակում բացված այս կառույցները ներկայացնում են ուշ միջնադարի շինարարական արվեստի մի կարեւոր հատված, որն այսօր բացակայում է Երեւանում: Հիշենք, որ 19-րդ դարասկզբին Ռուսական մեծապետական կայսրության հրահանգով ավերվեցին Հայաստանի, տվյալ դեպքում՝ Երեւանի 17-19-րդ դարերի ժամանակաշրջանը ներկայացնող բազմաթիվ կոթողներ. բերդեր, պալատներ, բնակելի եւ հասարակական շենքեր: Իսկ 20-րդ դարի 30-ական թվականներից սկսած սովետական կարգերի կրոնական տխուր քաղաքականության զոհը դարձան Երեւանի եկեղեցիները, մատուռներն ու գերեզմանատները (Պողոս-Պետրոս եկեղեցին՝ այսօրվա «Մոսկվա» կինոթատրոնի տեղում, Սուրբ Աստվածածինը, որից մազապուրծ եղավ Կաթողիկեն, գիտությունների ակադեմիայի նախկին շենքի կողքին, աստվածաշնչային անունը կրող Գեթսեմանի մատուռը՝ օպերայի շենքի տարածքում, 11-րդ դարի հայտնի տոմարագետ ու աստղագետ Կոզեռնի մատուռը՝ Կոնդում, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ Չարենցի անվան դպրոցի տեղում) եւ շատ այլ կառույցներ, որոնք հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն են կազմել:

Եթե Հայաստանի տարբեր ժամանակաշրջանների քաղաքական իրավիճակը ինչ-որ կերպ ընկալելի է, ապա ներկայումս, երբ Հայաստանը անկախ հանրապետություն է եւ ունի իր ուրույն խոսքը քաղաքական խնդիրների լուծման ասպարեզում, ապա հայկական ճարտարապետության կանոններից յուրաքանչյուր շեղում քննադատելի է: Եվ այսօր կոկիկ ու իմաստավորված հրապարակը, որ համայն աշխարհի հայության եւ այլազգի այցելուների համար քաղաքի եզակի այցեքարտերից մեկն է, չգիտես ինչու փոփոխության ենթարկվելու վտանգի առջեւ է կանգնած, դարձել է հասարակության լայն խավերի մտահոգության առարկա: Խոսքը հրապարակը վերաձեւելու եւ ստորգետնյա ավտոկայանատեղի կառուցելու ծրագրի մասին է:

Չմոռանանք, որ հրապարակին արդեն հասցվել է առաջին լուրջ հարվածը: Լենինի արձանը ապամոնտաժելուց հետո վերացավ նաեւ գրանիտե քանդակազարդ պատվանդանը, արվեստի մի հազվագյուտ գործ, որը բեկորների վերածվելուց հետո փոշիացավ: Պատվանդանի կորուստը չմարսած՝ այսօր մի նոր ծրագիր է ենթադրվում:

Ծրագրի հեղինակներին հիշեցնենք, թե ինչ կերպ է ներկայացրել ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն, 1655թ. լինելով Երեւանում, մեր քաղաքի համայնապատկերը (տես՝ գծանկարը): Մի փոքր այլ ձեւով 1673թ. նույնը ներկայացրել է Ժան Շարդենը: Երկու դեպքում էլ նրանք առանձնացրել են քրիստոնյա հայերի բնակելի թաղը, երկու-երեք հարկանի, քանդակազարդ քիվեր կրող, բարձր պատուհաններ ունեցող շենքերով, փողոցներով: Թաղամասը բուն քաղաքի կենտրոնն է եղել, Շահար (Արարատյան թաղը), որտեղ 16-18 դդ. մինչեւ 20-րդ դարի սկիզբը կառուցվել եւ վերակառուցվել են շինություններ՝ ժամանակի հայկական ճարտարապետության ավանդույթներին բնորոշ ոճով ու ճաշակով:



17-19 դդ. հայկական ճարտարապետությունը մասնագիտական գրականության մեջ դիտվել է իբրեւ ազգային շինարվեստի անկման շրջան: Պատճառն այն է, որ երկիրը երկու երկրների (Պարսկաստան, Թուրքիա) հակամարտության թիրախում գտնվելով մշտապես ավերվել է:

Այդ նույն ժամանակ հայոց մշակույթը զարգացել է տարբեր երկների հայկական գաղութներում եւ աչքի է ընկել ոճական բազմազանությամբ: Եվ թվում էր, թե Հայաստանում ամեն ինչ վերջացած էր: Սակայն նույն 17-րդ դարի առաջին քառորդում Արեւելյան Հայաստանում ստեղծվում են քաղաքական բարենպաստ պայմաններ, որոնց շնորհիվ Հայաստանի մի շարք քաղաքներում, նաեւ Երեւանում նորովի զարգանում են առեւտուրն ու արհեստները, շինարարական արվեստը: Տարանցիկ առեւտրի կենտրոնում ձեւավորվում է հայ քաղաքաբնակների դասը, որը, բնականաբար, պետք է ապրեր կենտրոնում, ժամանակի առաջավոր պահանջներին համապատասխան տներում: Նոր կառույցները ծնվեցին հին ավանդույթների կիրառության սկզբունքով՝ Նախատիպ ունենալով հայկական ճարտարապետության վաղագույն շրջանի կառուցվածքները, սակայն այդ փոփոխությունները չդարձան նախորդ փուլերի կրկնությունը, այլ ունեցան հետաքրքրական առանձնահատկություններ եւ անվիճելի նվաճումներ (ճարտարապետ Մ. Հասրաթյան):

Հին վերածնությամբ կառուցված շինություններ տեսնում ենք Տավերնիեի վերը նշված հատակագծի վրա: Բայց 1679թ. ամռանը Երեւանում տեղի է ունենում մեծ երկրաշարժ, որի հետեւանքով քանդվում են քաղաքի բոլոր շինությունները: Զաքարիա սարկավագի վկայությամբ՝ հիմնահատակ են եղել Երեւանի բերդը պարիսպներով, եկեղեցիները, մզկիթները, կրկնահարկ, գեղեցկահարկ շինությունները: Այս գեղեցկահարկ բնակելի շենքերի մառաններն են, թերեւս, որ մնացել են փլատակների տակ:

Քաղաքի գլխավոր հատակագծի կենսագործմանը զարկ է տրվել 1862 թվականին: Բացվել է Աստաֆյան փողոցը, այժմ՝ Աբովյան, փողոցին զուգահեռ այժմյան Մաշտոցի, Տեր-Գաբրիելյանի, Տերյանի, Նալբանդյանի եւ Ալավերդյանի (Հանրապետության փ.) համակարգը: Քաղաքի գործարար կենտրոնում՝ բուն հրապարակում նոր կառուցապատում չի իրականացվել:

Երեւան քաղաքի պատմության մասին կան շատ ուսումնասիրություններ, սակայն ուշ միջնադարյան պատմության շրջանը հնագիտական առումով դեռեւս ուսումնասիրված չէ: Մեզ ընձեռված պատեհության շնորհիվ հնարավոր եղավ երեւան հանել մեր մայրաքաղաքի ուշ միջնադարին վերաբերող աշխարհիկ շինությունների ձեւի, բնույթի հետ կապված մանրամասներ, իսկ շինությունների ներսից եւ շրջապատից հայտնաբերված համապատասխան շրջանի նյութական մշակույթի բեկորներ:

Հատուկ քննության առարկա է տուֆ քարե ջրատար խողովակաշարը, որը ձգվել է Աբովյան փողոցով: Համակարգի մի հատվածը մնացել է ասֆալտի տակ, մի քանիսը տեղափոխվել են Էրեբունի թանգարան:

Պեղումները անավարտ են եւ հետագա ուսումնասիրության կարիք ունեն: Մեր սերունդները պետք է ուսումնասիրեն եւ լրջորեն մտածեն վերականգնելու եւ ցուցադրելու որպես Երեւանի ուշ միջնադարյան ճարտարապետության դիմագիծը ներկայացնող վավերագիր:

Հեռանկարային ծրագիրը պետք է լինի տեղում ոչ թե ավտոկայան, այլ երկհարկանի հրապարակ ունենալու գաղափարը:

ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ
(պ.գ.թ., հնագետ)

ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ
(պ.գ.թ., հնագետ)
ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ
ազգագրության ինստիտուտ

ԴԻՏԱՐԿՈՒՄ

# Հայաստանի ճակատագիրը կշեռքի վրա

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Հայաստանի անկախացումից ի վեր Թուրքիան եւ Ադրբեջանը Հայաստանի աստիճանական թուլացմանը միտված պատերազմ են սանձազերծել՝ շրջափակման ենթարկելով եւ սպառազինությունների մրցավազք պարտադրելով: Ընդամենը օրեր առաջ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը ցինիկաբար ակնարկեց, որ Հայաստանի բնակչությունը արագորեն նվազում է, եւ երկիրը շուտով պատրաստ կլինի նվաճվելու: 1994-ի Ադրբեջանի չարաչար պարտությունից հետո Բաքվի կառավարությունը կարծես ցանկանում էր հակամարտության լուծումը տեսնել հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող յոթ շրջանների վերադարձը ապահովելով: Ինչքան նավթադոլարները սկսեցին հեղեղել երկիրը, կառավարության ամբարտավանությունը համաչափորեն ավելացավ, եւ Բաքվի ղեկավարությունը սկսեց պահանջել ամբողջ Լեռնային Ղարաբաղի, իսկ ավելի ուշ՝ նաեւ ամբողջ Հայաստանի տարածքը:

Ադրբեջանի ամբարտավանությունը սնվում է միջազգային հանրության անտարբերությամբ, կամ, ավելի ճիշտ, խրախուսմամբ: Զինադադարի ազերիների իրականացրած բոլոր խախտումները սովորաբար անտեսվում են ԵԱՀԿ-ի ներկայացուցիչների կողմից, որոնք տարածաշրջան կատարած իրենց այցելությունների ժամանակ գրեթե ոչինչ չեն ձեռնարկում: Նրանց համապատասխան կառավարությունները (Ֆրանսիայի, Մ. Նահանգների եւ Ռուսաստանի) տարեկան հայտարարություններ են տարածում, որ «ստատուս քվոն» այլեւս անհանդուրժելի է, բայց այդ նույն «ստատուս քվոն» շարունակում է մնալ ուժի մեջ, որովհետեւ այդ հայտարարությունները գործնական քայլերով չեն պաշտպանված: Դրա արդյունքը լինում է այն, որ Ադրբեջանն իր նավթադոլարները օգտագործում է գնելու արդիական զինամթերք եւ քաղաքական ազդեցություն, արտաքին քննադատություններից զերծ պահելով իր ավտորիտար իշխանությունը:

Վերջերս Մ. Նահանգների 42 նահանգներից 317 պատվիրակներ (որոնցից 11-ը Կոնգրեսի անդամներ եւ 75-ը նահանգային ներկայացուցիչներ) Բաքվի կառավարության հաշվին շրջագայության էին դուրս եկել, մասնակցելու ինչ-որ մի ֆորումի: «Վաշինգտոն Էդվոքեյթ» թերթում հրատարակված հոդվածում նշվում էր, որ «Պլուֆը, Մեսինան եւ Գիսը... հնգանիշ չեկեր են ստացել ֆորումում հօգուտ Ադրբեջանի խոսելու համար»: Կաշառակերության նման բացահայտ երեւույթի առկայության դեպքում կարիք կա՞ այլ բացատրություններ փնտրելու, թե ինչու Օբամայի վարչակարգը շարունակում է չկիրառել «Անկախության պաշտպանության օրենքի» 907 հոդվածը, որը պատժամիջոցներ է նախատեսում Ադրբեջանի վատ վարքագծի համար:

Ադրբեջանը զանգվածային լրատվամիջոցներով գրոհ է սանձազերծել Հայաստանին որպես ագրեսոր ներկայացնելու եւ Խոջալուի դեպքերի համար հայերին մեղադրելու համար: Նման քարոզարշավի վերջին զոհերից էր Ինդոնեզիան, որի ոչ հեռավոր անցյալի պատմությունը հագեցած է 500 հազար բնիկ չինացիների սպանությամբ եւ Արեւելյան Թիմուրի ժողովուրդների դեմ իրագործված հանցագործություններով: Ավելի առաջ գնալով, Ադրբեջանը վերջերս համատեղ զորավարժություններ է անցկացրել թուրքական զինված ուժերի հետ: Ըստ թուրքական «Միլլիեթ» օրաթերթի՝ դա Անկարայի լուռ պատասխանն է ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի պահանջատիրական հայտարարությանը իրավաբանների համահայկական համագումարում:

Այս բոլոր զարգացումներին կրնկակոխ հետեւեց Ադրբեջանի պաշտպանության նախարարի հայտարարությունը, որ «Ադրբեջանն այլ ելք չունի, բացի ազատագրելու իր գրավյալ տարածքները՝ բանակի հզորացման միջոցով»: Սաֆար Աբիեւն այս հայտարարությունն արեց հուլիսի 12-ին՝ կորեական խորհրդարանական պատվիրակության Բաքու կատարած այցի ժամանակ:

Նման լարված իրավիճակում հայերին մնում էր ապավինել Մոսկվայի հետ ռազմավարական դաշինքով ձեռք բերված անվտանգության երաշխիքներին, որոնք, սակայն, փուչ դուրս եկան, երբ Մոսկվան սկսեց զինել Ադրբեջանին: Մոսկվայի նման գործողությունը, բացի լարվածության սրումից, ուրիշ բանի չի կարող ծառայել:

Եթե պատերազմ ծագի, Հայաստանի համար լինել-չլինելու խնդիր է առաջ գալու: Սպառնացող վտանգին ի տես, ենթադրվում էր, որ հայերը կզգաստանան եւ առավել բարձր մակարդակի կհասցնեն իրենց պաշտպանությունը: Բայց, դժբախտաբար, տեսնում ենք, որ մարդիկ այնտեղ զբաղված են դատափետումներով, սկանդալներով եւ ազգի կենսունակությունը հյուծելով: Էլեկտրոնային մեդիան Հայաստանում հիմնականում ֆինանսավորվում է արտաքին աղբյուրներից, որոնք կարող են միայն գոյություն ունեցող կրակին յուղ ավելացնել: Մարդկանց մի խումբ տագնապած է, բայց մեծամասնությունը անտարբեր է: Բնակչության վտանգավոր արտահոսքը շարունակվում է: Ամեն մեկը մյուսին է մեղադրում: Բայց դա չի օգնում, որ բնակչությունը մնա երկրում, աշխատանք գտնի, երջանիկ լինի եւ արի օրենքի գերակայության ներքո:

Թվում է թե հայերը վարակված են ինքնակործանման հազվադեպ հիվանդությամբ: Պատմական նախադեպերն այնքան էլ հուսադրիչ չեն: Տասնմեկերորդ դարի կեսերին հայերը Անին հանձնեցին բյուզանդացիներին:

1375-ին նրանք այնքան էին տարված դասական բանսարկություններով եւ երկպառակտչական վեճերով, որ Կիլիկյան թագավորությունը հեշտությամբ անցավ մամլուկների ձեռքը, եւ վերջապես, 1920-ին ներքին անհամաձայնություններն ու անիմաստ կռիվներն այնքան էին սաստկացել, որ Հայաստանի անկախ պետությունը դարձավ խորհրդային հանրապետություն:

Բայց մենք շատ լավ ենք ազատության եւ անկախության մասին սրտատոչոր երգեր հորինելու եւ վեց դար շարունակ դրանք երգելու մեջ: Սակայն սարկազմի ժամանակը չէ, այլ՝ սթափվելու եւ վերահաս պատերազմին դիմակայելու:

Դետրոյթ, ԱՄՆ

Թարգմ. Հ. Ծ

# Հյուսիսային Սիրիան անցել է քրդերի վերահսկողության տակ

*Դա դեռ սիրիական ընդդիմության ջախջախում չի նշանակում, սակայն ազդարարում է Թուրքիայի քաղաքական չախողումը*

Սիրիայի ճգնաժամին անդրադառնալիս բազմիցս նշել ենք, որ սիրիական ընդդիմությունը 16 առանձին խմբի է բաժանված: Նույնը գրել էինք նաեւ «Ազատ Սիրիայի բանակի» մասին, որն էլ 4 տարբեր խմբերից է բաղկացած: Թեեւ խոսքը տվյալ դեպքում ներքին ընդդիմության մասին է, բայց դրան ներքին կոչելը խիստ հարաբերական է: Այն առումով, որ «Ազատ Սիրիայի բանակը» կազմավորված է նաեւ Լիբիայում կռված վարձկաններից, որի կազմում առանձնակի ակտիվություն են դրսեւորում «Ալ Ղաիդայի» ահաբեկիչները, էլ չենք խոսում «Ան Նուսրա» ճակատի մարդասպանների մասին:

Մասնատված է նաեւ արտաքին ընդդիմությունը: Օրինակ` խաղաղ բնակչության դեմ Սիրիայում քիմիական զենքի օգտագործման հարցում ԱՄՆ-ն ու Եվրոմիությունը չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ: Մեկը դրա օգտագործումը վերագրում է նախագահ Բաշար Ասադի վարչակարգին, մյուսը` ընդդիմադիր ուժերին: Մինչդեռ սկզբում երկու կողմերն էլ դրա համար մեղադրում էին Սիրիայի գործող վարչակարգին, որպեսզի քիմիական զենքի օգտագործման պատրվակով թռիչքազերծ գոտի հայտարարեն երկրի օդային տարածքը:

Երբ դա բախվեց Ռուսաստանի հակազդեցությանը, ԱՄՆ-ն ու ԵՄ-ը հայտնվեցին տարաձայնությունների մեջ: Ի դեպ, տարաձայնությունների մեջ են նաեւ «Ազատ Սիրիայի բանակին» մատակարարող Սաուդյան Արաբիան ու Քաթարը: Թերեւս միանշանակ նախագահ Ասադի վարչակարգին աջակցում են Ռուսաստանն ու Չինաստանը, աջակցության հարցում հաստատակամ են Իրանը, Իրաքը եւ «Հզբոլլահը»:

Եթե նախագահ Ասադին Ռուսաստանի եւ Չինաստանի աջակցությունը Արեւմուտքին զրկում է Սիրիայի օդային տարածքը թռիչքազերծ գոտի հայտարարելու հնարավորությունից, պատճառ է դառնում, որ քիմիական զենքի օգտագործման շուրջ տարաձայնություններ առաջանան ԱՄՆ-ի ու ԵՄ-ի միջեւ, եւ անընդհատ հետաձգվի դեռեւս հունիսին նախատեսված Ժնեւյան միջազգային կոնֆերանսը, ապա Իրանի, Իրաքի եւ հատկապես «Հզբոլլահի» աջակցությունն էլ զգալի նպաստում է ընդդիմության նկատմամբ գործող վարչակարգի հաղթանակին:

Նախագահ Ասադի զորքերն արդեն վերահսկում են սիրիական ընդդիմության միջնաբերդը համարվող Հոմսը, ինչպես նաեւ Համան: Դա նրանց հնարավորություն է տվել վերահսկել Միջերկրականի առափնյա շրջանները մինչեւ Լաթաքիա: Որքան էլ շարունակվի Դամասկոսի ու Հալեպի հրետակոծությունը, մարտերն ընթանում են այս քաղաքների շրջաններում: Չի բացառվում, որ նախագահ Ասադի զորքերը շուտով «Ազատ Սիրիայի բանակի» վարձկաններին դուրս մղեն Դամասկոսի ու Հալեպի շրջաններից:

Համենայն դեպս, «Ժողովրդական միասնության քրդական» կուսակցությունը` PYD-ն, որը հարում է PKK-ին, «Ան Նուսրայի» դեմ թեժ մարտերից հետո գրավելով Թուրքիային սահմանակից Ռաս էլ Այնը, Թել Աբիադն ու Ռաքքան, ընդդիմությանը վտարել է հյուսիսային Սիրիայից: Թուրքական «Դունիա բուլթենի» լրատվական գործակալության վկայությամբ, քրդական ուժերը շարժվում են դեպի Իրաք` գրավելու «Ան Նուսրայի» վարձկաններից Արաբիա սահմանային անցակետը:

Մինչդեռ Հոմսում կրած պարտությունից հետո ընդդիմությունն իր ուժերը կենտրոնացրել էր հյուսիսային Սիրիայի վրա, հաշվի առնելով նաեւ այն, որ «Ազատ Սիրիայի բանակը» անմիջականորեն տեղակայված է սահմանի թուրքական հատվածում, որի մատակարարումը իրականացվում է Թուրքիայի միջոցով:

Թվում է, թե Հյուսիսային Իրաքին սահմանակից Արաբիայի կորստից հետո սիրիական ընդդիմությունը կփորձի ամրանալ հարավային Հորդանանի հետ սահմանամերձ շրջաններում, քանի որ այս երկիրը Թուրքիայի հետ «Ազատ Սիրիայի բանակի» երկրորդ գլխավոր մատակարարն է:

«Ազատ Սիրիայի բանակի» վտարումը հյուսիսային Սիրիայից ընդդիմության ջախջախում դեռեւս չի նշանակում, սակայն միանգամայն ենթադրում է Թուրքիայի սիրիական քաղաքականության կատարյալ ձախողումը, ընդ որում անկանխատեսելի հետեւանքներով: Խոսքը հյուսիսարեւելյան Սիրիայում քրդական ինքնավարության մասին է, որը, ԱՄՆ պետքարտուղարության տվյալներով, «Արեւմտյան Քուրդիստանի» անկախության է հանգեցնելու: Հիշեցնենք, որ Թուրքիայի հարավարեւելյան շրջաններն էլ համարվում են «Հյուսիսային Քուրդիստան» Դիարբեքիր մայրաքաղաքով:

Թեեւ, ինչպես թուրքական լրատվամիջոցներն են վկայում, Սիրիայի քրդերը, որոնց թիվը շուրջ 2 մլն է, դեռեւս ինքնավարություն չեն հռչակել, սակայն «Ան Նուսրայի» վարձկաններին Ռաս էլ Այնից եւ Թել Աբիադից վտարելուց հետո թուրքական սահմանին հասնող անցակետերում բարձրացրել են դեղին-կարմիր-կանաչ գույնի PYD-ի դրոշը, որի գույները համընկնում են PKK-ի դրոշին: Հյուսիսային Սիրիա ելքումուտքը վերահսկում են PYD-ի մարտիկները, ինչպես եւ ամբողջ շրջանը, ունեն արդեն շրջանին յուրահատուկ ավտոհամարանիշներ:

Այլ կերպ, հյուսիսային Սիրիայում առկա են քրդական ինքնավարության բոլոր հատկանիշները: Ավելին, Արաբիան գրավելուց հետո, երբ քրդերը վերահսկեն նաեւ իրաքյան սահմանը, կդառնան սահմանակից Հյուսիսային Իրաքի «Քուրդիստան» շրջանի հետ, որը դե ֆակտո անկախ է: Իսկ «Քուրդիստան» շրջանի նախագահ Մասուդ Բարզանին Էրբիլում պատրաստվում է գումարել քրդական համազգային համագումար, որի նախապատրաստական նիստը մասնակցությամբ Թուրքիայի, Սիրիայի եւ Իրանի քրդերի պատվիրակությունների, նախորդ օրն էր գումարվել:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱ

# Ստամբուլի դատարանը թույլատրեց կտրել «Գեզի» զբոսայգու ծառերը



**Ստամբուլի տարածաշրջանային վարչական դատարանը բավարարել է Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարարության գանգատարկումը եւ թույլատրել է ծառեր հատել «Գեզի» զբոսայգում, որտեղ կառուցվելու է առեւտրի կենտրոն: Այդ մասին հաղորդում է The Hurriyet Daily News կայքէջը: Թե կոնկրետ երբ է կայացվել դատավճիռը, չի հաղորդվում:**

**Այսպիսով բեկանվել է Ստամբուլի վեցերորդ վարչական դատարանի վճիռը, որը երկու անգամ քննել էր այդ գործը: Մայիսի 31-ին դատարանը պաշտպանել էր «Գեզի» զբոսայգու պաշտպանության միության հայցը ընդդեմ Մշակութային ժառանգության պահպանության բարձրագույն խորհրդի, որը թույլատրել էր զբոսայգու տեղում նոր շենք կառուցել Օսմանյան կայսրության ժամանակների զորանոցների նմանությամբ: Մշակույթի եւ զբոսաշրջության նախարարությունը բողոքարկել էր այդ դատավճիռը, սակայն հուլիսի 2-ին բողոքը մերժվել էր: Դրանից հետո իշխանությունները գանգատարկմամբ դիմել էին Ստամբուլի տարածաշրջանային վարչական դատարանին:**

**«Գեզի» զբոսայգում ծառահատումը սկսվել էր մայիսի 27-ի ուշ երեկոյան: Իշխանությունները մտադիր են այնտեղ կառուցել նոր շենք եւ տեղավորել առեւտրի կենտրոն կամ սոցիալական հիմնարկներ: Շինարարների գործողություններին ի պատասխան` զբոսայգում հավաքվել էին բողոքավորներ, որպեսզի խոչընդոտեն զբոսայգու վերացմանը: Այն բանից հետո, երբ ոստիկանությունը դաժանորեն ցրել էր ցուցարարներին, բողոքի գործողությունները տարածվել էին Թուրքիայի ուրիշ քաղաքներում եւս: Ընդդիմադիրները պահանջում էին ոչ միայն «Գեզի» զբոսայգու պահպանումը, այլեւ կառավարության հրաժարականը:**

# Գեներալ Դեմպսին մշակել է Սիրիայի պատերազմին միջամտելու 5 տարբերակ

*1-ին էջից*

**Դեմպսին մանրամասնել է, որ այդ բոլոր տարբերակները պահանջում են հակամարտության գոտում օդուժի եւ ցամաքային զորքերի օգտագործում եւ հղի են անձնակազմի լուրջ կորուստներով: Նրա կարծիքով, տարբերակներից յուրաքանչյուրի ծախսերը կկազմեն ամսական առնվազն 1 մլրդ դոլար:**

**Գեներալի պատրաստած փաստաթղթում նշվում է, որ ԱՄՆ-ի իշխանությունները պետք է հետեւություններ անեն վերջին 10 տարվա իրենց ռազմական գործողություններից եւ միջոցներ ձեռնարկեն Սիրիայում ռեալ կերպով գործող քաղաքական համակարգ պահպանելու համար: Հակառակ դեպքում պատերազմին միջամտելը կարող է հանգեցնել ԱՄՆ-ի իշխանությունների համար անցանկալի հետեւանքների:**

**Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ երեկ լուծվել է նաեւ սիրիացի ապստամբների զինամատակարարման հարցը: Բուռն բանավեճերից հետո Կոնգրեսը հանել է ամերիկյան զենքի մատակարարման հետ կապված առարկությունները: Կոնգրեսի հետախուզության կոմիտեի նախագահ Մայք Ռոջերսը հայտարարել է, որ վարչակազմը կարող է առաջ շարժվել զինամատակարարման հարցում, միայն թե պարտավոր է հաշվի առնել կոնգրեսականների մտահոգությունները:**

# Թագուհու ծոռան ծնունդից հետո The Sun թերթը դարձավ The Son

*Խաղագումարները կրկին հարստացրին բուքմեյքերներին*

Մեծ Բրիտանիայի Էլիզաբեթ Բ թագուհու թոռ Ուիլյամի (Չառլզի որդին) կինը` Քեյթ Միդլտոնը, հուլիսի 22-ի երեկոյան լույս աշխարհ բերեց անդրանիկ զավակին: Այդ արու զավակի ծնունդը, որը թագուհու առաջին ծոռն է, մեծ ուրախություն պատճառեց բրիտանացիներին: Բանն այնտեղ հասավ, որ բրիտանական խոշոր թերթերից մեկը` The Sun-ը («Արեւ») հուլիսի 23-ին անվանափոխվեց եւ լույս տեսավ որպես The Son («Որդի»): Թե հրատարակությունը որքան ժամանակ լույս կտեսնի նոր անունով, առայժմ հայտնի չէ:

Թերթի կայքէջում կա The Royal Baby խորագիր, որի ներքո զետեղված են փաստեր Քեմբրիջի դքսի ու դքսուհու առաջնեկի վերաբերյալ, կամ անվանացանկ, հատուկ խաղ եւ թագավորական ընտանիքի անդամների մանկական լուսանկարներ:

Իշխան Ուիլյամի եւ Քեյթ Միդլտոնի որդու ծնունդը հուլիսի 23-ին գլխավոր թեմա էր բրիտանական նաեւ մյուս հրատարակություններում: Օրինակ, The Daily Star եւ The Daily Express թերթերի առաջին էջի վրա միեւնույն` It's a boy վերնագիրն էր:

Քեմբրիջի դքսուհի Քեյթ Միդլտոնը ծննդաբերեց Լոնդոնի «Սուրբ Մարիամ» հիվանդանոցում: Երեխայի քաշը 3,8 կգ է: Մայրն ու որդին իրենց լավ են զգում եւ առայժմ մնում են հիվանդանոցում, հաղորդում է BBC-ն: Քեյթի եւ Ուիլյամի նորածին որդին արդեն ստացել է Քեմբրիջի իշխանի տիտղոս: Վերջին 190 տարում Մեծ Բրիտանիայում այդ տիտղոսը նորածնին շնորհվում է առաջին անգամ:




Բրիտանացի լրագրողներն այժմ գուշակություններ են անում, թե ծնողներն ինչպես կանվանեն իրենց որդուն: «Սքայ նյուզ» հեռուստաալիքը առավել հավանական է համարում Ֆիլիպ, Ջորջ եւ Չառլզ անունները: Նշվում է, որ երեխայի անունը կարող են հրապարակել բավական ուշ: Օրինակ, երբ ծնվեց արքայազն Չառլզը, նրա անունը հանրությանը հայտնեցին մեկ ամիս հետո միայն:

Թագուհու ծոռան ծնունդը փող դիզելու համար առիթ դարձավ բրիտանացի բուքմեյքերների համար, որոնք ներկայումս հաշվում են իրենց շահույթները: Որոշ տեղեկությունների համաձայն, նրանք թագավորական ընտանիքի համալրման շնորհիվ կարողացել են նույնիսկ ավելի մեծ գումարներ ստանալ, քան մարզական որեւէ միջոցառման ժամանակ; Խաղագումարներ ընդունվում էին ամեն ինչի համար. դեռ չծնված երեխայի սեռը, անունը, քաշը եւ այլն: Ամենատարածված խաղագումարը 50 ֆունտ ստեռլինգ էր:

Մարդկանց մեծ մասը կարծում էր, որ եթե ծնվի աղջիկ, նրան կանվանակոչեն Ալեքսանդրա: Ի դեպ, փողոցներում հարցման ենթարկված բրիտանացիները եւ զբոսաշրջիկները ամենից հաճախ հայտարարել են, որ տղա երեխայի ծնունդը իրենց համար անակնկալ է. իրենք սպասում էին, որ կծնվի աղջիկ:

# Մարզական

# Կհաղթահարվի՞ սերբական արգելապատնեշը

## *Բուքմեյքերները նախապատվությունը տալիս են «Պարտիզանին»*



Երեկ վաղ առավոտյան ֆուտբոլի Հայաստանի չեմպիոն Գյումրիի «Շիրակը» Երեւան-Մոսկվա-Բելգրադ չվերթով ուղեւորվեց Սերբիա, որտեղ այսօր Երեւանի ժամանակով ժամը 22.45-ին կսկսվի մրցավեճը տեղի «Պարտիզանի» հետ: Գյումրու մարզական պատվիրակությունը Բելգրադ է մեկնել «Շիրակի» նախագահ, ԱԺ պատգամավոր Արման Սահակյանի գլխավորությամբ: Թիմի կազմում են 18 ֆուտբոլիստներ, որոնք Վարդան Բիչախչյանի գլխավորությամբ լրջորեն են նախապատրաստվել պատասխան հանդիպմանը:

Ինչպես հայտնի է, հուլիսի 17-ին «Շիրակը» Գյումրիում վերջին րոպեներին ձեռքից բաց թողեց հաղթանակը: Գյումրեցիները շատ լավ խաղացին սեփական հարկի տակ, զգալի խաղային եւ տարածքային առավելություն ունեին եւ կարող էին մի քանի անգամ գրավել «Պարտիզանի» դարպասը: Սակայն շիրակցիները գոլային պահերից միայն մեկն օգտագործեցին, իսկ խաղավերջում չկարողացան պահպանել հաղթական հաշիվը:

Ինչ խոսք, այսօր «Շիրակին» լուրջ փորձություն է սպասում: Եվրոպայի լիգայի որակավորման 3-րդ փուլի ուղեգիր նվաճելու համար «Շիրակին» առաջին հերթին հարկավոր է գոլ խփել: Իսկ դրա համար գյումրեցիները պետք է առաջին իսկ րոպեներից ակտիվորեն գրոհեն եւ կարողանան իրացնել գոլային պահերը: Սպասվում է, որ «Պարտիզանը» սեփական հարկի տակ կձգտի մեծ ճնշում գործադրել հյուրերի դարպասին եւ որքան հնարավոր է, շուտ հասնել հաջողության: Նման պայմաններում շիրակցիները պետք է շատ ուշադիր եւ հստակ գործեն պաշտպանությունում եւ փորձեն արագ հակագրոհների շնորհիվ հասնել հաջողության: Կհաջողվի՞ արդյոք «Շիրակին» հաղթահարել սերբական արգելապատնեշը, դժվար է գուշակել:

Հարկ է նշել, որ դեռ երբեք հայկական ակումբներին չի հաջողվել միանգամից 2 փուլ հաղթահարել: «Շիրակը» կարող է առաջինը լինել: Դրա համար գյումրեցիները պետք է ներդնեն իրենց ողջ ուժերը, դրսեւորեն խաղային լավագույն որակներ: Հուսանք, որ հաջողությունը կուղեկցի «Շիրակին»:

Ի դեպ, հայտնի է դարձել, որ «Պարտիզանի» կազմում պատասխան հանդիպմանը մասնակցելու է թիմի բուլղարացի կենտրոնական պաշտպան Իվան Իվանովը, որը պատրաստվում էր տեղափոխվել շվեյցարական «Բազել»:

Բուքմեյքերներն այսօրվա խաղում նախապատվությունը տալիս են «Պարտիզանին», որի հաղթանակի գործակիցը 1,16 է: Իսկ ահա «Շիրակի» հաղթանակը գնահատվել է շատ ավելի բարձր գործակցով՝ 14,5: Ոչ-ոքին գնահատվում է 6,75 գործակցով:

# Հեռարդո Մարտինոն գլխավորեց «Բարսելոնը»



**50-ամյա արգենտինացի մասնագետ Հեռարդո Մարտինոն պաշտոնապես գլխավորեց իսպանական «Բարսելոնը»: Նա 2 տարվա պայմանագիր է կնքել ակումբի հետ: Մինչ այդ նա գլխավորում էր «Նյուելս Օլդ Բոյզը»: Նա կփոխարինի Տիտո Վիլանովային, որը հուլիսի 19-ին հեռացել էր թիմից առողջական խնդիրների պատճառով: Հիշեցնենք, որ Վիլանովայի մոտ քաղցկեղ է հայտնաբերվել եւ նա 2 անգամ արդեն վիրահատության է ենթարկվել:**

**Մարզչական կարիերայում իր առաջին հաջողությանը Մարտինոն հասել է Պարագվայում: 2000-ականների կեսերին նրա գլխավորությամբ տեղի ակումբները 4 անգամ երկրի չեմպիոն են հռչակվել: 2007-ին նա գլխավորեց Պարագվայի հավաքականը: Նրա օրոք 2010-ի աշխարհի առաջնությունում պարագվայցիներն առաջին անգամ հասան մինչեւ քառորդ եզրափակիչ, իսկ 2011-ին հանդես եկան Ամերիկայի գավաթի եզրափակիչում: Վերջին անգամ նման հաջողության հավաքականը հասել էր 1979-ի գավաթի խաղարկությունում: Այնուհետեւ Մարտինոն գլխավորեց արգենտինական «Նյուելս Օլդ Բոյզը», որի կազմում ժամանակին խաղացել էր ու համարվում էր Ռոսարիոյի ակումբի լեգենդը: Հետաքրքրական է, որ Լիոնել Մեսին էլ ծնունդով Ռոսարիոյից է եւ պատանի հասակում խաղացել է այդ թիմում:**

# Գուս Հիդինքը հեռացավ «Անժիից»

**Հոլանդացի մասնագետ Գուս Հիդինքը հեռացավ Մախաչկալայի «Անժիի» գլխավոր մարզչի պաշտոնից: Նրան կփոխարինի հոլանդացի մեկ այլ մարզիչ՝ Ռենե Մելեստենը, որը ժամանակին եղել է Ալեքս Ֆերգյուսոնի օգնականը:**

**«Անժիի» ղեկավարությունը բավարարել է Հիդինքի խնդրանքը եւ շնորհակալություն հայտնել համատեղ աշխատանքի համար: Հիդինքի գլխավորությամբ «Անժին» իր պատմության մեջ հասավ ամենամեծ հաջողությանը՝ նվաճելով բրոնզե մեդալները:**

**Մասնագետների կարծիքով Հիդինքի հեռանալու պատճառը թիմի անհաջող մեկնարկն է առաջնությունում, ինչպես նաեւ անկայուն ելույթները նախորդ մրցաշրջանի վերջնագծում: «Անժին» պարտվեց ԲԿՄԱ-ին ՌԴ գավաթի եզրափակիչում, իսկ առաջնության 2 հանդիպումներում ընդամենը մեկ միավոր վաստակեց:**

**«Այս որոշումն ինձ հեշտ չտրվեց: Սակայն ես մշտապես ասել եմ, որ իմ առաքելությունն «Անժիում» կավարտվի այն ժամանակ, երբ ակումբը կկարողանա զարգանալ առանց իմ միջամտության: Այժմ այդ ժամանակը եկել է: Համոզված եմ, որ ակումբին հիանալի ապագա է սպասում: Եվ ես ուրախ եմ, որ մասնակցել եմ նման խոստումնալից ֆուտբոլային ծրագրի իրականացմանը», հայտարարել է Հիդինքը թիմի ֆուտբոլիստների հետ հրաժեշտի հանդիպման ժամանակ:**

**Նշենք, որ Գուս Հիդինքը դեռեւս այս տարվա գարնանն էր պատրաստվում հեռանալ «Անժիից», սակայն ակումբի ղեկավարությունը նրան համարժեք փոխարինող չէր գտնում: Ուստի եւս մեկ տարով երկարաձգվեց Հիդինքի պայմանագրի ժամկետը:**

**Հիդինքը դեռ չէր հեռացել Ռուսաստանից, երբ իսպանական լրատվամիջոցները նրան համարեցին «Բարսելոնի» գլխավոր մարզիչ Տիտո Վիլանովայի հնարավոր փոխարինող: Վերջինս առողջական խնդիրների պատճառով օրերս ստիպված էր հեռանալ «Բարսելոնից»: Բրիտանական «Ուիլյամ Հիլլ» բուքմեյքերական ընկերությունն էլ արդեն սկսել է խաղադրույքներ ընդունել Հիդինքի հնարավոր աշխատատեղերի առիթով:**

**Հիդինքն «Անժին» գլխավորեց 2012-ի սկզբին: Չնայած թիմը գարնանային հատվածում այնքան էլ հաջող չխաղաց, սակայն հասավ իր լավագույն արդյունքին՝ գրավելով 3-րդ տեղը: Իսկ ավելի վաղ՝ 2006-ին նա ստանձնել էր ՌԴ ազգային հավաքականի ղեկը: Նրա գլխավորությամբ Ռուսաստանի հավաքականը 2008-ի Եվրոպայի առաջնությունում բրոնզե մրցանակակիր էր դարձել: Հիդինքն աշխատել է նաեւ «Չելսիում», «Վալենսիայում», «Ֆեներբահչեում», «Ռեալում», «Բետիսում», «Դե Գրաֆսխապում», «Էյնդհովենում», մարզել է Հոլանդիայի, Հարավային Կորեայի, Ավստրալիայի եւ Թուրքիայի հավաքականները:**



# Ղարամյանը սկսեց ոչ-ոքիով

**Շվեյցարիայի Բիլ քաղաքում մեկնարկած մրցաշարը ոչ-ոքիով սկսեց ֆրանսահայ գրոսմայստեր Տիգրան Ղարամյանը, որի մրցակիցը Չելսիե Սիհիթեն էր: Հաջորդ տուրում Ղարամյանը կխաղա Վլադիմիր Մինկոյի հետ:**

# «Արարատը» զիջեց «Հապոելին»

**Սերբիայում ուսումնամարզական հավաք անցկացնող «Արարատը» ստուգողական 2-րդ խաղում 1-2 հաշվով պարտվել է Իսրայելի «Հապոելին»: Մրցակիցը յուրաքանչյուր խաղակեսում մեկական գոլ է խփել, իսկ խաղավերջում Տիգրան Ղարաբաղցյանը կրճատել է հաշվի տարբերությունը:**

**Օրերս «Արարատի» հետ մեկ տարվա պայմանագիր է կնքել «Բանանցի» դարպասապահ Ստեփան Ղազարյանը: Որքան էլ որ տարօրինակ է, այսօր «Արարատում» արդեն 5 դարպասապահ կա: Անցած մրցաշրջանում թիմի դարպասը պաշտպանած Արսեն Պետրոսյանին եւ Մայիս Ազիզյանին միացել են նաեւ Մանվել Աֆրիկյանը, Գրիգոր Մելիքսեթյանն ու Ստեփան Ղազարյանը:**

# «Բանանցը» կմրցի վրացական թիմերի հետ

**Երեւանի «Բանանցը» Ժոլտ Հոռնյակի գլխավորությամբ շարունակում է նախապատրաստվել նոր մրցաշրջանին: Եթե անցյալ տարի ակումբի ղեկավարությունը որոշել էր ապավինել սեփական մարզադպրոցի կադրերին, ապա այս անգամ կրկին թիմ են հրավիրվել լեգեոնականներ, որոնք առայժմ փորձաշրջան են անցնում «Բանանցում»: Թիմին է միացել նաեւ «Ռուբինի» երիտասարդական կազմում հանդես եկած Մարաս Դոյաշին, իսկ այսօր Երեւան կժամանեն եւս 2 լեգեոնականներ՝ Ֆոֆանա Սեկուն եւ Իսմայիլա Դիարան:**

**Մինչեւ առաջնության մեկնարկը «Բանանցը» Իջեւանի «Արնար» մարզադաշտում ընկերական 2 հանդիպում կանցկացնի վրացական ակումբների հետ: Այսօր «Բանանցը» կմրցի Վրաստանի առաջնության բարձրագույն խմբի ուղեգիր նվաճած Ցխինվալիի «Սպարտակի» հետ, իսկ հուլիսի 28-ին մրցակիցը կլինի առաջին խմբի առաջատարներից մեկը՝ Թբիլիսիի «Սիոնը»:**

# Աղվան Մկրտչյանը մարզվում է «Ալաշկերտում»

«Միկայի» նախկին ավագ Աղվան Մկրտչյանը մտադրվել էր կարիերան շարունակել Լիբանանում, սակայն ներկայումս մարզվում է Մարտունու «Ալաշկերտում»: Ինչպես նշել է թիմի գլխավոր մարզիչ Արմեն Սանամյանը, հնարավոր է, որ Աղվանը պայմանագիր կնքի թիմի հետ:

«Ալաշկերտում» փորձաշրջան է անցնում «Ուլիսի» նախկին պաշտպան Լեւան Ակոբիան: «Ալաշկերտը» հրաժարվել է Իտալիայի B սերիայում հանդես եկած իտալացի պաշտպանից, որը փորձարկվում էր թիմում:

# Հռոմի պապին անվանական մարզաշապիկ նվիրեցին



**Երիտասարդության համաշխարհային օրվա առիթով Բրազիլիա ժամանած Հռոմի պապ Ֆրանցիսկը հանդիպել է տեղի «Ֆլումինենսե» թիմի ղեկավարության հետ: Վերջինս Հռոմի պապին 10 համարի անվանական մարզաշապիկ է նվիրել: Նվերը նրան է հանձնել ակումբի փոխնախագահ Ալեքսեյ Դանթեսը:**

**Ծնունդով արգենտինացի Հռոմի պապը ֆուտբոլի մեծ երկրպագու է: Նա վաղ տարիքից երկրպագել է արգենտինական «Սան Լորենսոյին»: Ավելի վաղ Հռոմի պապը հանդիպել էր այդ թիմի ֆուտբոլիստների հետ: Իսկ Բրազիլիա այցելության ժամանակ նա կհանդիպի Պելեին, Զիկոյին եւ Նեյմարին:**

# 100 մլն եվրո Բեյլի համար

Մադրիդի «Ռեալի» ղեկավարությունը սկսել է բանակցել «Տոտենհեմի» հետ թիմի կիսապաշտպան Գարեթ Բեյլին գնելու հարցով: Արքայական ակումբը պատրաստ է 100 մլն եվրո վճարել ֆուտբոլիստի տրանսֆերի համար: Լոնդոնյան ակումբի ղեկավարությունը նախկինում հայտարարել էր, որ միայն 100 մլն եվրոյի դիմաց կհամաձայնվի վաճառել Բեյլին:

Անգլիայի նախորդ առաջնությունում Գարեթ Բեյլը 33 խաղում 21 գոլի հեղինակ է դարձել: Նա ճանաչվել է պրեմիեր լիգայի լավագույն ֆուտբոլիստ: Բեյլը լավագույնի տիտղոսին է արժանացել նաեւ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների ընկերակցության եւ բրիտանացի ֆուտբոլային լրագրողների միջեւ անցկացված հարցման արդյունքներով:

# Ֆաբրեգասին գնելու եւս մեկ փորձ

«Մանչեսթր Յունայթեդը» պատրաստվում է վերջին անգամ առաջարկ կատարել «Բարսելոնին» Սեսկ Ֆաբրեգասի տեղափոխության հարցով: Անգլիական ակումբը պատրաստ է 41 մլն եվրո վճարել: Եթե գործարքը չկայանա, ապա «Մանչեսթր Յունայթեդը» կփորձի այլ ֆուտբոլիստների թիմ հրավիրել: Ֆաբրեգասը հայտարարել է, որ մտադիր է նոր մրցաշրջանն անցկացնել «Բարսելոնում»: Նախկինում «Մանչեսթր Յունայթեդը» 2 անգամ փորձել էր դրականորեն լուծել տրանսֆերի հարցը, սակայն մերժում էր ստացել:

Ֆաբրեգասն Իսպանիայի նախորդ առաջնությունում 32 հանդիպումներում 11 գոլ է խփել:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

# Օրվա հետքերով

## Ռուստամ Իբրահիմբեկովը կձերբակալվի

*1-ին էջից*

Մշակույթի նախարարությունը հիշյալ չափով գումար հատկացրել էր, որ կինեմատոգրաֆիստների միությունը կազմակերպի «Արեւելք-Արեւմուտք» կինոփառատոնը: Ինչպես կարելի է հասկանալ, Իբրահիմբեկովը կասկածվում է գումարների մեծ մասը կանխիկացնելու եւ «ոչ նպատակային ծախսելու» մեջ: Միաժամանակ հայտնի է դարձել, որ «կինեմատոգրաֆիստների միությունը խուսափել է 13 000 մանաթ գումարի հարկային պարտավորություններից»:

Հարկային մարմիններն ավարտել են նախնական քննությունը եւ նյութերը փոխանցել գլխավոր դատախազություն: Այնտեղ, սակայն, հրաժարվել են մեկնաբանություններից՝ ասելով, որ «դա նախաքննության գաղտնիք է»: Ուշադրություն է գրավում, որ առկա տեղեկատվության մեջ խոսք իսկ չկա Իբրահիմբեկովի հանդեպ հետախուզում հայտարարելու մասին: Հիշեցնենք, որ Իբրահիմբեկովը նաեւ Ռուսաստանի քաղաքացի է:

Տպավորություն է ստեղծվում, որ «հարկերից խուսափելու հանգամանքով» հարուցված գործը զուտ քաղաքական է: Իշխող վարչախումբն այդ կերպ հասկացնում է, որ Իբրահիմբեկովը չպետք է հայտնվի Ադրբեջանում: Հակառակ դեպքում նրան սպասում է ձերբակալություն, ապա՝ կալանք, տեւական «դատաքննություն»: Իսկ մինչ այդ Իլհամ Ալիեւը կհասցնի ավարտել «նախագահական ընտրությունները»:

Ամեն ինչ արվում է, որ ընդդիմությունը իրական այլընտրանք չներկայացնի: Եթե Իբրահիմբեկովը, երկյուղելով ձերբակալությունից, որոշի մնալ Մոսկվայում, ապա ամենայն հավանականությամբ Իլհամ Ալիեւի «մրցակից» կլինի «Մուսավաթ»-ի առաջնորդ Իսա Գամբարը, որին, ինչպես ամենատարբեր վերլուծաբաններն են վկայում, Ադրբեջանում «այլեւս ոչ ոք չի հավատում»:

Իլհամ Ալիեւը կատարել է իր ընտրությունը՝ պատրաստվում է ձերբակալել մրցակցին, եթե վերջինս փորձի ոտք դնել Ադրբեջանի սահմանին: Մնում է սպասել, թե ի՞նչ որոշում կընդունի Ռուստամ Իբրահիմբեկովը: Կընդունի՞ նա իրեն արված «առաջարկությունը», թե՞ հավատարիմ կմնա խոստմանը: Իբրահիմբեկովի ոչ այնքան հեռավոր անցյալի կոռուպցիոն գործարքների մասին ադրբեջանական մամուլի գնալով թափ առնող քարոզչությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ադրբեջանական «Վացլավ Հավելի» ձեռքերն, ըստ երեւույթին, այնքան էլ մաքուր չեն:

Եվ նա կգերադասի կյանքի մնացած տարիներն ապահով անցկացնել ինչ-որ տեղ Մոսկվայում կամ Լոս Անջելեսի առանձնատանը, իսկ Իսա Գամբարը եւս մեկ անգամ կխաղա դեռեւս ՊԱԿ-ի ժամանակներից Հեյդար Ալիեւի հեղինակությամբ իրեն վերապահված «արմատական ընդդիմադիրի» իր համար բոլոր առումներով շահավետ դերը:

---

### Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ
### AN Audit CJSC
### Անկախ աուդիտորական եզրակացություն

***«Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ բաժնետերերին***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի 2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2012 թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաեւ ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները եւ այլ բացատրական տեղեկատվություն:

***Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար***

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ պատասխանատվությունը ներառում է այնպիսի ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում եւ կիրառում, որը ղեկավարությանն անհրաժեշտ կհամարի էական խեղաթյուրումներից (թե սխալի, թե խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաեւ տեղին հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ողջամիտ հաշվապահական գնահատականների կատարում:

***Աուդիտորի պատասխանատվությունը***

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք սույն աուդիտորական եզրակացությանը կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետեւենք աուդիտորի վարքածի կանոններին եւ աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք այնպես, որ ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ: Կիրառված ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ինչը ներառում է նաեւ ֆինանսական հաշվետվություններում այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ եւ թե սխալներով: Այդ ռիսկերի գնահատումներն իրականացնելիս աուդիտորը հաշվի է առնում ներքին վերահսկողության համակարգը, որքանով այն տեղին է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար, որպեսզի նախատեսի աուդիտորական այնպիսի ընթացակարգեր, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, բայց ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը նաեւ ներառում է կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելու եւ ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորության գնահատում, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:

Մենք գտնում ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար եւ համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

***Կարծիք***

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի առ 31 դեկտեմբերի 2012 թ. ֆինանսական վիճակը եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

***Արթուր Հարությունյան***
***Տնօրեն***
*«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ*
*Երեւան*
*15 հուլիսի 2013 թ.*

***Անուշ Գրիգորյան***
***Աուդիտոր***

**«Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ**
**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

| *Հազար դրամ* | Ծան. | 2012 թ. | 2011 թ. |
|---|---|---|---|
| Հասույթ | 13 | 3,503,412 | - |
| Վաճառքի ինքնարժեք | 14 | (3,254,775) | - |
| **Համախառն շահույթ** | | **248,637** | **-** |
| Այլ եկամուտներ | | 2,334 | - |
| Իրացման ծախսեր | | (3,572) | - |
| Վարչական ծախսեր | | (5,799) | - |
| Այլ ծախսեր | 15 | (15,274) | - |
| **Գործառնական շահույթ** | | **226,325** | **-** |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից կորուստ | | (4,256) | - |
| **Շահույթ մինչեւ հարկումը** | | **222,070** | **-** |
| Շահութահարկի գծով ծախս | 16 | (44,480) | - |
| **Շահույթ հարկումից հետո** | | **177,590** | **-** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | - | - |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | **177,590** | **-** |

***Տնօրեն*** ***Գլխավոր հաշվապահ***
***Ա. Ավանեսյան*** ***Հ. Գրիգորյան***
*15 հուլիսի 2013 թ.*

**«Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ**
**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

| *Հազար դրամ* | Ծան. | 31.12.2012 թ. | 31.12.2011 թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 17 | 3,086 | - |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **3,086** | **-** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 6 | 363,018 | - |
| Տրված կանխավճարներ | 7 | 29,260 | - |
| Առեւտրական դեբիտորական պարտքեր | 8 | 287,827 | - |
| Դրամական միջոցներ | 10 | 81 | - |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 9 | 36,720 | - |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **716,906** | **-** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **719,992** | **-** |
| **Սեփական կապիտալ եւ պարտավորություններ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 11 | 5,000 | - |
| Կուտակված շահույթ | | 177,590 | - |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **182,590** | **-** |
| Առեւտրական եւ այլ կրեդիտորական պարտքեր | 12 | 507,079 | - |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 30,046 | - |
| Այլ հարկերի եւ պարտադիր վճարների գծով պարտավորություններ | | 230 | |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | | 47 | - |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **537,402** | **-** |
| **Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ** | | **719,992** | **-** |

***Տնօրեն*** ***Գլխավոր հաշվապահ***
***Ա. Ավանեսյան*** ***Հ. Գրիգորյան***
*15 հուլիսի 2013 թ.*

---

### Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ
### AN Audit CJSC
### Անկախ աուդիտորական եզրակացություն

***«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ բաժնետերերին եւ տնօրենների խորհրդին***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի եւ իր դուստր ընկերության՝ «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Խումբ) 2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա՝ կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2012 թ. ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաեւ ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները եւ այլ բացատրական տեղեկատվություն:

***Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար***

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ պատասխանատվությունը ներառում է այնպիսի ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում եւ կիրառում, որը ղեկավարությանն անհրաժեշտ կհամարի էական խեղաթյուրումներից (թե սխալի, թե խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաեւ տեղին հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ողջամիտ հաշվապահական գնահատականների կատարում:

***Աուդիտորի պատասխանատվությունը***

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք սույն աուդիտորական եզրակացությանը կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետեւենք աուդիտորի վարքագծի կանոններին եւ աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք այնպես, որ ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ: Կիրառված ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ինչը ներառում է նաեւ ֆինանսական հաշվետվություններում այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ եւ թե սխալներով: Այդ ռիսկերի գնահատումներն իրականացնելիս աուդիտորը հաշվի է առնում ներքին վերահսկողության համակարգը, որքանով այն տեղին է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար, որպեսզի նախատեսի աուդիտորական այնպիսի ընթացակարգեր, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, բայց ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը նաեւ ներառում է կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելու եւ ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորության գնահատում, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:

Մենք գտնում ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար եւ համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

***Կարծիք***

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի առ 31 դեկտեմբերի 2012 թ. ֆինանսական վիճակը եւ նույն ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

***Այլ հարցեր***

«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի 2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի ենթարկվել են այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը դրանց վերաբերյալ արտահայտել է դրական կարծիք 2012 թվականի հունիսի 26-ին: Նախորդ տարի համախմբված ֆինանսական հաշվետվություններ չեն կազմվել, քանզի Խումբը չի ունեցել դուստր ընկերություններ:

***Արթուր Հարությունյան***
***Տնօրեն***
*«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ*
*Երեւան*
*15 հուլիսի 2013 թ.*

***Անուշ Գրիգորյան***
***Աուդիտոր***

**«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ եւ «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ**
**Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն**

| *Հազար դրամ* | Ծան. | 31.12.2012 թ. | 31.12.2011 թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 6 | 1,650,010 | 1,986,651 |
| Ներդրումային գույք | 7 | 255,593 | - |
| Ոչ նյութական ակտիվներ | 8 | 110,250 | 120,180 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար | | 372 | 335 |
| Շահութահարկի նվազագույն գումար | | 185,248 | 126,231 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **2,201,473** | **2,233,397** |
| Պաշարներ | 9 | 3,127,027 | 2,643,289 |
| Տրված կանխավճարներ | 10 | 93,674 | 140,148 |
| Առեւտրական եւ այլ դեբիտորական պարտքեր | 11 | 947,039 | 846,310 |
| Շահութահարկի գծով կանխավճար | | - | 11,366 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 12 | 148,691 | 152,853 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 13 | 244,433 | 131,428 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **4,560,864** | **3,925,394** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **6,762,337** | **6,158,791** |
| **Սեփական կապիտալ եւ պարտավորություններ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 14 | 1,229,787 | 1,229,787 |
| Էմիսիոն եկամուտ | 15 | 911,458 | 911,458 |
| Կուտակված շահույթ | | 1,026,112 | 851,153 |
| Պահուստային կապիտալ | 16 | 184,470 | 184,470 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 17 | 521,424 | 521,424 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **3,873,251** | **3,698,292** |
| Վարկեր | 18 | 540,977 | 150,000 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 19 | 211,633 | 216,985 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **752,610** | **366,985** |
| Վարկեր | 18 | 188,110 | 346,743 |
| Առեւտրական եւ այլ կրեդիտորական պարտքեր | 20 | 1,727,014 | 1,540,021 |
| Ստացված կանխավճարներ | 21 | 39,703 | 41,909 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 18,680 | - |
| Այլ հարկերի եւ պարտադիր վճարների գծով պարտավորություններ | 22 | 33,139 | 32,985 |
| Պարտավորություններ աշխատակիցներին | 23 | 80,463 | 74,465 |
| Շահաբաժինների գծով պարտավորություններ | | 38,100 | 48,913 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | | 11,267 | 8,478 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **2,136,476** | **2,093,514** |
| **Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ** | | **6,762,337** | **6,158,791** |

***Գլխավոր տնօրեն*** ***Ֆինանսական տնօրեն***
***Արթուր Գրիգորյան*** ***Հրանտ Գրիգորյան***
*15 հուլիսի 2013 թ.*

**«Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ եւ «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ**
**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն**

| *Հազար դրամ* | Ծան. | 2012 թ. | 2011 թ. |
|---|---|---|---|
| Հասույթ | 24 | 14,554,342 | 11,285,618 |
| Վաճառքի ինքնարժեք | 25 | (12,479,318) | (9,565,567) |
| **Համախառն շահույթ** | | **2,075,024** | **1,720,051** |
| Այլ եկամուտներ | 26 | 130,294 | 152,870 |
| Վարչական ծախսեր | 27 | (283,535) | (316,171) |
| Իրացման ծախսեր | 28 | (1,264,257) | (1,138,052) |
| Այլ ծախսեր | 29 | (146,662) | (173,842) |
| **Գործառնական շահույթ** | | **510,864** | **244,856** |
| Ֆինանսական եկամուտներ | | 42 | - |
| Ֆինանսական ծախսեր | | (88,269) | (71,625) |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս) | | (32,980) | (23,989) |
| **Շահույթ մինչեւ հարկումը** | | **389,657** | **149,242** |
| Շահութահարկի գծով ծախս | 30 | (114,698) | (67,417) |
| **Շահույթ հարկումից հետո** | | **274,959** | **81,825** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | - | - |
| **Ընդամենը շահույթ եւ համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար, որը վերագրելի է՝** | | **274,959** | **81,825** |
| **Ընկերության բաժնետերերին** | | **274,959** | **81,825** |
| **Չվերահսկող բաժնեմասերին** | | **-** | **-** |

***Գլխավոր տնօրեն*** ***Ֆինանսական տնօրեն***
***Արթուր Գրիգորյան*** ***Հրանտ Գրիգորյան***
*15 հուլիսի 2013 թ.*

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 23.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: